

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

II ԴԱՍԱՐԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

1/2 W

05 FEB 2018

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ՎԵՐԱՄՇՍԿԱԳԱԾ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմեցի՝ Մ. ԴՈՒՐԳԱՐՅԱՆ
Ն. ՄԱԶՄԱՆՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939




11-2884991

АРМЯНСКИЙ ЯЗЫК

Книга для чтения

II класс

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.



1. ԴՊՐՈՑԻ ՃԱՄՓԱՆ

Ձմեռվա բուքին, սառնամանիքին
դպրոցի ճամփան
դժվար ե, յերկար՝ շատերի համար:
Զվարթ դարունքին, յերգին ու ծաղկին
դպրոցի ճամփան
կարճ ե, դուրառի կարծես ավելի:
Իսկ ով սե՛ր ունի մեզ պես ուսումի,
դպրոցի ճամփան
Միշտ կարճ ե, սիրուն՝ ձմեռ թե դարուն:

1

Պայծառ արեւը բարձրացաւ յերկինք և Վոսկե-
վայլ ճառագայթները տարածեց յերկրի վրա:

Առաջին ճառագայթն ընկաւ արտուտի վրա: Ար-
տուտը թփրտաց, թափ տվեց թևերը, դուրս թռաւ բը-
նից, բարձրացաւ վեր ու վեր և սկսեց յերգել բարձ-
րաձայն, — ճի՛ւլ, ճի՛ւլ, ճի՛ւլ. ճիլի—վիլի, ճիլի—վի-
լի. վո՛ւտ—վո՛ւտ—վո՛ւտ. ճը՛ռռ...

2

Յերկրորդ ճառագայթը նապաստակի վրա ընկաւ:
նապաստակն ականջները խլշացրեց, նայեց դեռ ու դեռ,
ցատկելով մտաւ ցողաթաթախ կանաչիւտը և սկսեց
նախաճաշիկ անել մեղրածոր խոտերով:

3

Յերրորդ ճառագայթը հալարունն ընկաւ: Աքաղա-
ղը թափ տվեց թևերը և կանչեց ծուղրուղո՛ւ...դո՛ւ-
դո՛ւ...դո՛ւ: Կանչեց աքաղաղը հալերին, վոր ցած իջնեն
թառերից և առաւիտյան նախաճաշիկն անեն:

Հալերը ցած թռան, կշկշացին և աքաղաղի հրավե-
րով սկսեցին քուշուշ անել:

4

Չորրորդ ճառագայթը փեթակի վրա ընկաւ: Մե-
ղունները տաքացան և դուրս բնկնելով՝ դեռ ու դեռ թը-
ռան ազդալով, վոր մեղթածոր ծաղիկներից իրենց սը-
նունդն ստանան:

5


Հինգերորդ ճառագայթն ընկաւ մի թիւր մանուկի
անկողնու վրա և սկսեց նրա աչքերը ծակծկել. նա վեր
թռաւ տեղից և շտապով պատրաստվեց ուռումնարան
զնալու:

1

Վաղ առավոտ է: Անտառի հետեից ծաղում է ա-
րեւը:

Բնությունը կենդանացաւ: Թռչունները յերգեցին:
Անտառի բնակիչները դործի անցան:

Հանկարծ բոլորն սթափվեցին զիլ ձայնից:



— Տրու-րու-րու: Տրամ-տամ-տամ:

Շեփորի ու թմբուկի ձայների տակ դաշտ դուրս
յեկան պիտներական ջոկատները:

Ջոկատավարը հրամայեց.

— Ջոկատ, կա՛նգ առ: Դե, ընկերներ, այժմ մենք
մեր տանն ենք: Սկսենք վրաններ կառուցել:

2

Չանցավ մի ժամ— վողջ դաշտը ծածկված էր
սպիտակ վրաններով: Պիտներները ցրվեցին անտառի
մեջ— խարույկների համար ցախ հավաքելու:

Այս ու այն կողմից ձայներ ելին լավում.

— Վա՛յ, ինչքան վորդե՛ր կան:

— Այ խելո՛ք, ինչ վորդ— սրանք մըջյուններ են:

— Տես ինչպիսի հասուլիկ վորդ եմ դտե՛լ:

— Իսկ յես մի ահուելի բզեզ բռնեցի:

— Գիտե՞ք ինչ, ընկերներ, — ասում է Սիրիկը, —
յեկեք կոռեկցիա կազմենք: Այդ կլինի մեր ճամբարի
նվերը դպրոցին:

— Կեցցե՛ Սիրիկը. լավ բան է մտածել, — այս ու
այն կողմից բացականչեցին պիտներները:

Յեռում է աշխատանքը: Յերեխաները հանեցին
իրենց հետ բերած տուփերը, սրվակները, թիթեռ վոր-
տալու ցանցերը, նաև դրժերը՝ գետի և անտառի բնա-
կիչների մասին:

Վողջ սոմուր յեռանդով հավաքում էյին. ճանա-
չեցին անտառում ապրող թռչուններին, միջատներին:
Իմացան, թե ո՛վ է ապրում կեղևի տակ, ո՛վ է տուն չի-
նում տերևների միջին, ո՛վ է թաղնվում կոճղերի ա-
րանքներում:

Յեվ այնուհետև վոչ վոք այլևս մըջյուններին
տեսնելով՝ նրանց վորդ չեր անվանում:

4. ԱՆՈՒՇ ՈՐԵՐ

Անուշ որեր, ուրախ տարի,
Ունենք անչափ բերք ու բարի,
Հպարտ ենք մենք ու յերջանիկ,
Կեցցե՛ ազատ մեր հայրենիք:

Մեծ Ստալին, դարեր ապրես,
Դարեր չոդա արեւը քեզ,
Ժողովուրդը քեզնով հպարտ
Յերջանիկ է ու միշտ անպարտ:

5. ԱՇՆԱՐՀՈՒՄ ՄԻ ՄԵԾ ՅԵՐԿԻՐ ԿԱ

Դա աշխարհի ամենամեծ յերկիրն է: Վտաքով մեկ
ծայրից մյուսը դնալու համար հարկավոր է չորս տա-
րի:

Հարցնենք այդ յերկրի բնակիչներին, բոլորին մի
անգամից ռադիոյով. — որվա վո՞ր ժամանակն է:

Վոմանք կպատասխանեն.

— Մեզ մոտ առավոտ է:

Մյուսները կպատասխանեն.

— Մեզ մոտ կեսօր է:

Ուրիշները կպատասխանեն.

— Մեզ մոտ յերեկոյն է:

Հարցնենք այդ յերկրի բնակիչներին միանգամից՝
ռադիոյով:

— Տարվա վո՞ր յեղանակն է:

Վոմանք կպատասխանեն.

— Մեզ մոտ դարուն է:

Մյուսները կպատասխանեն.

— Մեզ մոտ ձմեռ է:

Հարցնենք այդ յերկրի բնակիչներին.

— Ի՞նչ հորատու թյուն կա ձեզ մոտ:
Վոմանք կաշատասխանեն— յերկաթ.
Մյուսները— հաց.

Ուրիշները— քարածո՛ւկ, բամբա՛կ, նա՛վթ...
Այսպես հարուստ ե ու սքանչելի մեր հայրենիքը,
ամբողջ աշխարհի աշխատավորները հայրենիքը, Սոր-
հըրդային Միությունը:



Մ. Ագիգբեկով



Ս. Շահումյան



Պ. Զախարյան

6. ՔԱՆԱԿՆԻ ՅԵՐԳԸ

«Մենք կմեռնենք,
Բայց կոմունան
Վոզջ կմնա
Հավիտյան»:

Այսպես ասին
Քսանովեցը
Դահիճներին
Այն վարձկան:
Այժմ հազար—
Հազար անիվ
Գործարանում
Դղրդում,
Հազար—հազար

Տրակտորներ
Մեր դաշտերում
Հանդում,
Քսանովեցի
Յերգն են յերգում.
Աշխարհով մեկ
Զիլ կանչում.
«Նրանք մեռան,
Բայց կոմունան
Վոզջ կմնա
Հավիտյան»:

7. ԿՆՌԱՍԸ

1

Զարո՛վ յեկար, սիրուն թռչնիկ, հազար բարով,
անուշիկ, յերգիր մեզ համար,— ասաց ծառի ծայրին
որորևո՞ղ կեռաս:

— Այս գիշեր շատ ցուրտ եր, յես մրսեցի, այնչափ
մրսեցի, վոր քիչ մնաց պառչեյի,— մեջ ընկավ մի ու-
րիշը.— այս մեկ թշիկս ինչպես կարմրել ե, իսկ այս
մեկը դեռ սպիտակ ե. ա՛խ, քանի—քանի անգամ այս
տերեին ինչդրել եմ, վոր արևի առաջը չառնի, նա չի
լսում:

— Բան չկա, փոքրիկ կեռաս,— ասաց թռչնիկը.—
արևն այդ մեկ թշիկդ ել կկարմրացնի:

Թռչնիկը յերգեց, բոլոր կեռասները հանդիստ լը-
սում, ուրախանում եյին:

— Ա՛յ, ա՛յ, ոգնեցե՛ք, ոգնեցե՛ք,— աղաչեց մի
կեռաս,— այս թրթուրն ինձ ուզում ե ուտել:

Թռչնիկը հասավ, կոցեց թրթուրին ու կերավ:

— Շնորհակալու եմ, բարի թուշնիկ, շնորհակալ. դու
իմ կյանքս ազատեցիր. այդ թրթուրներն իմ քույրերից
չառերին կերան, չորացրին. յես ուզում եմ մեծ, սի-
րուն, կարմիր կեռաս դառնալ:

2

Փոքրիկ կեռասը քիչ-քիչ մեծացավ, կառ-կարմիր
դարձավ: Նա ուրախ-ուրախ չորս կողմն եր նայում,
կարմիր թշիկներն ամենքին ցույց տալիս: Մի որ ել
յեկավ պարտիզպանը, սանդուխքը դրեց և կեռասները
քաղելով՝ կողովը լցրեց:

— Ինչո՞ւ յեսն քաղում, այս ո՞ւր են տանում իմ
քույրերին, — դարձացած ասում եր կեռասը: — Յես
ամենաբարձր ճյուղի վրա յեմ, ինձ վոչ վոք չի հաս-
նի:

Քիչ հեռու ծառի վրա կեռաս չմնաց:

— Մենակ տխուր ե, — մտածեց կեռասը, — ել չար-
ժե սպրեկ:

3

— Բարե՛քե՛ղ, բարե՛ղ, — ասաց թռչնիկը, — ինչ-
պես տեսնում եմ, մենակ ես մնացել:

— Այո՛, տխուր ե, — ասաց կեռասը, — յես շատ
ուրախ եմ, վոր յեկար, մի ասա տեսնեմ, յես գեղե-
ցիկ չե՞մ, մի՞թե ինձ չես հավանում:

— Յես սիրում եմ քեզ, դու շատ լավն ես, —
ասաց թռչնիկը:

— Վոր այդպես ե, կացիր ինձ, թող իմ թշիկները
քեզ բաժին լինեն. դու ինձ կյանք տվիր. քո լավությու-
նը չեմ մոռացել: Բայց գիտե՞ս ինչ կա, սիրելի թռչ-
նիկ, մի խնդիր ունեմ, այն ել կատարիր:

— Յես քեզ համար ամեն բան կանեմ, — ասաց
թռչնիկը:

— Կորիզիս մեջ մի բան եմ զգում, նա պիտի ապ-
րի, ծլի, մեծանա, մեծ ծառ դառնա: Յերբ դու ինձ
ուտես, տար իմ կորիզը պարտիզում անկիր:

— Պարտիզում դու չես կարող մեծանալ, — պա-
տասխանեց թռչնիկը, — խոտը հնձելիս քեզ կկտրեն:
Յանկապատի մոտ մի լավ տեղ գիտեմ, այնտեղ կարն-
կեմ, վոր դու մեծանաս, սիրուն ծառ դառնաս:


8. ԾԻՏԻԿԸ

Յերգում եմ, յերգում
Յեվ ուրախանում,
Վոր իմ յերգերով
Աշխարհն ե հրճվում:

Իմ գործն ե՛ անվերջ
Յերգել ու յերգել,
Ազատ ու անհոգ
Ճախրել անարգել:

Աշխարհը իմ գեմ
Լայն ե ու արձակ,
Ուրախ թռչում եմ,
Ճախրում համարձակ:

Ուր ել վոր ուզեմ
Կարող եմ թռչել,
Շնորհք ունիմ յես
Յեվ ձկուն թեվեր:



Ամառվա մի տաք որ եր: Արևի շողերն այրում,
խորովում էյին արտն ու արտար: Գրսում ամեն ինչ
լուռ եր: Գյուղի առջևից հոսող վտակի վազոցն ել չեր
լսվում. նա ել եր պապանձվել:

Որվա այդ շոգ պահին գյուղի բոլոր յերեխաները
հավաքվել էյին ձորի գլխին ու նայում էյին ցած:
Ներքևում, ձորի մեջ կռվում էյին վոզնին ու ոճը:



Կռվը կատաղի յեր: Ոճը սուլում եր, թռիչքներ եր
կատարում փշոտ վոզնու շուրջը, բայց վոչ մի կերպ չեր
կարողանում բռնել: Վոզնին ել փոքրիկ գլուխը հանում
եր ու հարմար բոպեյից ոգավում, կծում ոճի մեջքը,
փորը, վիզն ու նորից կծկվում: Վերջին անգամ փշերի
միջից գլուխը հանեց, հանկարծ բռնեց ոճի պոչը և
կրկին կծկվեց:

Ոճն ինչքան աշխատում եր, չեր կարողանում ա-
գառվել. ցավից փչչացնում եր, յերբեմն գլուխն եր մո-
տեցնում պոչին, յերբեմն մարմինն եր դեռ ու դեռ նե-

տում: Վոզնու փշերն ամուր ու սուր էյին և անխնա
քրքրում էյին ոճի մարմինն ու գլուխը:

Ոճը հետզհետե թուլացավ, մարմնի վրա բազմա-
թիվ վերքեր բացվեցին, այլևս չեր սուլում, միայն
ցնցվում եր ամբողջ մարմնով:

Վոզնին ոճի պոչը պինդ կծած՝ կծկվել եր ամուր:
Բալական ժամանակ անցավ, մինչև ոճը բոլորովին
անշարժացավ: Արդեն սատկել եր:

Վոզնին բաց թողեց նրա պոչը, գլուխը թյամբ մի
քանի անգամ հանեց իր գլուխը, դիտեց շուրջը, նա-
յեց ոճին, դնաց ու ծածկվեց մոտակա թփերի տակ:

ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ

Մի փոքրիկ կենդանի,
Ձկարձեք ընտանի,
Գունդ ու կլոր
Փշակուլ...

Դնքը կլոր ու յերկար,
Շոր ե հազնում առանց կարչ

10. ԻՐԻԿՈՒՆ

Արևը շատ եր հոգնել, ման եր յեկել ամբողջ ուրը.

«Հերիք ե,— ասավ,—
գնամ պառկեմ ու քնեմ»:

Տերեն ուրախ սլսվում եր, վոր կանգ առավ.

«Ես ի՞նչ ե,— ասավ,—
արևն ել չի յերևում,
յես ել պառկեմ ու քնեմ»:

Թռչնակը յերգում եր ծառի վրա, հանկարծ լռեց.

«Ես ի՞նչ ե,— ասավ,—
վոչ տերեն ե սլսվում,
վոչ արևն ե յերևում,
յես ել գնամ ու քնեմ»:

Նապաստակը վոստոստում եր թփերի տակ,
վոր ախանջը սրեց.

«Ես ի՞նչ ե,— ասավ,—



վոչ թռչնակն ե ծրվում,
վոչ տերեն ե սվռում,
վոչ արեն ե յերևում,
յես ել գնամ ու քնեմ»:

Վորսկանը անտառում վորս եր վորոնում, կանգնեց.

«Ես ի՞նչ ե, — ասավ, —
վոչ նապաստակ ե վազ տալի,
վոչ թռչնակ ե ծրվում,
վոչ տերեն ե սվռվում,
վոչ արեն ե յերևում,
յես ել գնամ ու քնեմ»:

Լուսինը ծագեց, ցած նայեց, տեսավ.

«Ինչ լա՛վ ե, — ասավ, —
վոչ վորսորդ ե ման գալի,
վոչ նապաստակ վազ տալի,
վոչ թռչնակ ե ծրվում,
վոչ արեն ե յերևում.
մենակ յես եմ վոր անքուն
քեֆ եմ անում յերկնքում»:

11. Յ Ե Մ ...

Ազոավը բռնեց մի խեցգետին և նստեց ծառին:
Նեցգետինն ուղեց ազոավի, կտցիցը զառվի ու
ասաց նրան.

— Վոսկեհատիկ, ազոավ տատիկ, ո՞վ ե մեզնից
կեղտոտը:

Ազոավը սեղմեց կտուցը և կռուաց.

— Դո՛ւ...

— Վոսկեհատիկ, ազոավ տատիկ, ո՞վ ե մեզնից
նախշունը:

Ազոավը բացեց կտուցն ու կռուաց.

— Յե՛ս...

Կտուցը բաց անելուն պես, խեցգետինը կտցից ըն-
կավ ջուրը և իրեն ազատեց:

ՀԱՆՆԻՆԻՅ. — Ասում եմ. «արի, արի», չի գալիս:

Ասում եմ. «մի՛ գա, մի՛ գա», գալիս ե:



12. ԳԵՏԱԿԸ

— Ո՞ւր ես վազում
Այդպես արագ,
Այ դու կայտառ,
Սիրուն գետակ.
Կա՛նգ առ, խաղանք
Այս ծառի տակ:

«Ձե՛, փոքրիկս,
Գնամ պիտի.
Տես ջաղացը
Դյուղի մոտի.
Պետք ե ուժ տամ,
Վոր պտտի:

Ցածն ել հովտում
Անուշահոտ
Ինձ են մնում
Ծաղիկ ու խոտ,
Հողնած, ծառավ
Տավարն ու հոտ:

Իե՛, տեսնո՞ւմ ես,
Մնաս բարով.
Ճամփաս ցանած
Հազար գործով,
Դադար չունեմ
Յես մինչև ծով»:



13. ՅԵՐԿՈՒ ԱՅԾ

Գետակի վրա վորպես կամուրջ մի նեղ գետն եր գցված: Մեկ անգամ յերկու կամակոր այծ փրար հանդիպեցին այդ կամուրջի վրա:

Յերկուսը մեկ անգամից չեյին կարող անցնել այդ նեղ կամուրջով. պետք է նրանցից մեկը հետ կանգներ և մյուսին ճանապարհ տար:

— Դու հետ գնա, վոր յես անց կենամ,— ասաց մեկը:

— Ինչո՞ւ դու հետ չես քաշվում, քան թե ինձ ես առաջարկում,— պատասխանեց մյուսը:

— Քեզ ասում եմ՝ հետ քաշվիր, առաջ յես եմ բարձրացել կամուրջի վրա:

— Ներողութիւն կանես: Գիտե՞ս ում հետ ես խոսում, վոր դեռ բարկանում ել ես:

Այժերը ճակատ ճակատի զարկեցին, իրար գլուխ շատռեցին, և վերջը յերկուսն ել կամուրջից սայթաքեցին, ջուրը թափվեցին:

14. ԳԱՅԼՆ ՈՒ ԳԱՌՆՈՒԿԸ

Մի որ մի փոքրիկ գառնուկ կորավ անտառում: Յերկար ժամանակ դես ու դեն վազելուց հետո, սկսեց վախենալ ու «մայրիկ, մայրիկ» կանչել:

Մայրը չլսեց նրան, բայց քաղցած դայլը լսեց:

— Ինչ վոր ուզում եմ ճաշիս համար, գտա,— ասաց դայլը:

— Ա՛խ, դայլ քեռի,— ասաց փոքրիկ գառնուկը,— խնդրում եմ ինձ ցույց տաք մեր տան ճանապարհը:

— Ձեր տան ճանապարհը ցույց կտամ իմ փորում,— գոռաց դայլը:— Յես քաղցած եմ և պետք է քեզ ուտեմ:

— Ա՛խ, խնդրում եմ... խնդրում եմ, դայլ քեռի, բարի յեղեք, թույլ տվեք դնամ:

— Վոչ, վոչ, քեզ պետք է ուտեմ,— կրկին գոռաց դայլը և հարձակվեց գառնուկի վրա:

— Բայց, դայլ քեռի,— ասաց գառնուկը,— լսել եմ վոր դուք լավ ձայն ունեք, խնդրում եմ ինձ համար յերգեք, վոր մի անգամ ել պարեմ. նախքան մեռնելս, մի մեծ բան հո չի:

Այդ բանը դուր յեկավ դայլին, հենց դրա համար ել նա հպարտացավ և պատրաստվեց յերգելու:

— Դե,— գոռաց դայլը,— ճաշելուց առաջ յերգը լավ է, դրա համար ել շատ անգամ ճաշից առաջ յերգում եմ, բայց քանի վոր այսօր շատ եմ քաղցած, միայն մի յերգ եմ յերգելու,— ասաց նա,— վորից հետո քեզ ուտելու յեմ: Դե պարի, բայց աշխույժ պարի:

Գայլն սկսեց մի յերգ վրոնալ, իսկ գառնուկն սկսեց պարել:

Յերբ գայլը դադարեց, գառնուկն ասաց.

— Այդ լավ եր, բայց դուք ինձ համար մի քիչ բարձր և արագ չերգեցիք, մի՞թե այդ ե ձեր ձայնը:

— Վո՛չ,— ասաց գայլը,— յես կարող եմ ավելի բարձր յերգել և ավելի արագ, քան անտառի կենդանիներն զորեւ մեկը: Դե, լսիր:

Յեւ գայլը յերգեց ավելի բարձր ու ավելի արագ, իսկ գառնուկը պարեց ավելի աշխույժ և ավելի լավ:

Գայլն այնքան ազմուկ բարձրացրեց, վոր շները լսեցին ու վազեցին դեպի անտառը:

Յերբ գայլը շներին տեսավ, դադարեցրեց իր յերգն ու փախավ, իսկ շները սլացան նրա հետեից:

Փոքրիկ ու խելացի գառնուկն աղահոյ տուն գնաց իր մոր մոտ:



15. ԲԿԼԻԿ ԶԿՆԻԿԸ

Զկնիկ, լո՛ղ տուր, լող արա,
Դրսի վորսը թո՛ղ արա,
Իջիր ջրի հատակը,
Մի՛նչև անցնի վտանգը:

Տե՛ս, փորձանք կա քո գլխին,
Մի լավ մտիկ յերեխին,
Վորդ ե խփել իր կարթին,
Զմոտենաս եդ վորդին:

Ինձ չլսեց շեկլիկը,
Ինձ չլսեց բկլիկը.
Հո՛ւ, կուլ՝ ամեց նա վորդը,
Կարթը մնաց կոկորդը:

ՇՈՒՏԱՍԵՆՈՒԿ. — Զուկ դցեմ՝ ձուկ կուլ տամ,
Մուկ դցեմ՝ ձուկ կուլ տամ:



17. ԱՂՎԵՍԸ

Աղվեսն յեկավ բարձր սարից,
Հարցմունք արավ լիքը թառից.
— Մեծ խորոզ ե հարկավոր ինձ:
Քաղցած աղվեսն, ագին ծաղիկ:

Աղվեսն հազել քուրքը դեղին,
Պտուտ կըգա շուրջը գեղին,
Ջուր կտրվեց տատիս լեղին:
Դեղին աղվեսն, ագին ծաղիկ:

Աղվեսն առավ պառավ տատին.
— Մտիկ չեմ տա ձեռիդ փետին,
Կարոտել եմ թմբիլիկ ճուտին:
Անվախ աղվեսն, ագին ծաղիկ:

Աղվեսն յեկել, նստել դեղին,
Յերկար ագին ծուել վզին,

Աչք ե ձգել մեր խորոզին:
Են գող աղվեսն, ագին ծաղիկ:

Մին ել կանչեց տատս պառավ.
— Ամա՛ն, հասե՛ք, տարա՛վ, կերա՛վ...
Գլխիս ես ի՞նչ փորձանք բերավ
Անտեր աղվեսն, ագին ծաղիկ:

Ա՛յ իմ խորոզ, կարմ'ի՛ր խորոզ,
Ման կգայիր գոռոզ-գոռոզ.
Փետուրդ արավ վողջ դար ու փոս
Են չար աղվեսն, ագին ծաղիկ:

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Աղվես, աղվես,
Աղով աղվես,
Մաղով մաղվես,
Դեղով դաղվես,
Գետնին թաղվես,
Պատից կախվես:

18. ԶՂԶԻԿԸ

Զղջիկը մկան մարմին ունի, թռչունի թեվեր, այդ պատճառով դժվար ե վորոչել—նա մո՞ւկ ե, թե թռչուն:

Մի՛ անգամ տհա կենդանիների կառավարությունը հարկ դրեց իր հպատակներին վրա: Դրանց թվում ե մկների:

Յեվ յերբ հարկահավաքները, տուրք հավաքելով,

գնացին չղջիկի մօտ, սա բարկացավ և հրաժարվեց հարկ տալուց:

— Յես մո՞ւլի եմ,— ասաց,— վոր յեկել եք ինձ մօտ: Ձե՞ք տեսնում՝ թռչուն եմ...

Ու ցույց տվեց թևերը:

Հարկահավաքները նրա թևերը տեսնելով՝ հեռացան, մտածելով, վոր նա, իսկապես, մուլի չի, այլ թռչուն է:

Անցավ ժամանակ: Կառավարութունը հարկ դրեց և թռչունների վրա:

Հարկահավաքները, հարկ հավաքելով, գնացին նորեկ չղջիկի դուռը:

Չղջիկը սաստիկ բարկացավ.



— Կո՞ւյր եք, ինչ է,— ասաց:— Ձե՞ք տեսնում՝ յես մուլի եմ:

Ու ցույց տվեց ատամները:

Հարկահավաքները, նրա ատամները տեսնելով, հեռացան, մտածելով, վոր նա իսկապես թռչուն չի:

Յեվ այսպես չղջիկն ազատվեց հարկից: Բայց վորպեսզի ել հարկահավաքների ձեռքը չընկնի, նա ցերեկները պահվում է քանդված պատերի ձեղքերում ու ծառերի փշակներում, իսկ գիշերը դուրս է գալիս վորսի, վոր իրեն վոչ վոր չտեսնի:

19. ԳՅՈՒՂԱՅԻՆ ՈՒ ԱՐՁԸ

1

Գյուղացին իր բոստանում
Գարնանը սերմ եր ցանում:
Արջը յեկավ. «Բարե քեզ,
Ի՞նչ ես անում քեզ ու քեզ:
Արի, ա՛յ մարդ, միանանք,
Մեկ-տեղ անենք վար ու ցանք.
Վար ու ցանքը մեր էլիսրար,
Հունձն ել անենք հավասար»:
— Աչքիս վրա, արջ ապեր,
Ոտար հո չենք. կուղես, բեր
Հենց առաջին անգամը
Ցանենք մոտիս շաղգամը:
Ինձ արմատը հողումը,
Քեզ տերևն ու ցողունը:

2

Քաղցր ու խոշոր շաղգամը
Հողում տուգեց աշնանը:
Մեր ապերն ու գյուղացին
Շաղգամն հողից հանեցին:
Ապերն առավ տերևը,
Արմատներն ել ընկերը:
Արջը տեսավ, վոր խաբվեց,
Մարդու դեմը քիչ լարվեց:
«Վա՛յ, ինձ խաբե՞ գյուղացին».



Կաց են մյուս ցանոցին
Ինչ վոր ցանենք հողումը,
Նրան կտանք ցողունը»:

3

Մյուս տարի ցանոցին
Արջին ասաց գյուղացին.
— Ապեր, արի մենք ելի
Մի բան ցանենք կիսովի:
Արջը թե՛ «հա, շատ բարի,
Միայն անշուշտ ես տարի,
Ինձ արմատը հողումը,
Քեզ տերեն ու ցողունը»:
— Համաձայն եմ յես նորեն.
Հիմի ցանենք մենք ցորեն:
Մարդը գիտեր իր բանը.
Ապրը հետ՝ իր տանը
Ցորենն ածեց տոպրակը,
Տվեց նրա շալակը.
Ու ցանեցին են արտը
Բրդոտ անկերն ու մարդը:

Ընկերները հունիսին
Արտն հնձեցին միասին:
Հատկերն ընկան գյուղացուն
Արմատն ընկավ սարեցուն:
Արջը ել չհամբերեց,
Եղտեղ մի լավ փրփրեց.
Արգեն սաստիկ նեղացավ,
Թճեց, մարդուց հեռացավ:
Ու են որից մինչ հիմի
Դարձավ մարդուն թշնամի:

ՀԱՆՆԵԼՈՒԿ.—Պատը գետնի տակին, միբուքը՝ գետնի յերեսին:

20. Մ Ե Ր Շ ՈՒ Ն Ը

Մենք շատ չներ ենք ունեցել, բայց մի շուն ունե-
ցինք, վոր գյուղի մեջ մի հատ եր: Ուրի՛շ շուն եր մեր
շունը, հասկացող, խելոք, հավատարիմ: Լավն եր,
շատ լավն եր, իսկի չեմ մոռանում մեր Մչկոյին:

Առավոտյան կովերին նախրամեջ տանողը մեր Մրչ-
կոն եր. յերեկոյան նախրից տուն բերողը՝ մեր Մչկոն
եր:

Հաց թխելու ժամանակ հավ ու ճիւղ տանից դուրս
անողը՝ մեր Մչկոն եր:

Յերեկոյան դեմ հավ ու ճիւղ, թխամորն իր ճու-
տերով ներս անողը՝ մեր Մչկոն եր:

Մայրիկս մենակ կին եր, բայց շատ թիր: Առա-
վոտը վաղ վեր եր կենում, տան դորձն անում, կերա-
կուր յեփում, հաց թխում: Փոքրիկ յեղբորս ել ծիծ եր

տալիս, քնացնում որորոցում, դուռը վրան փակում ու գալիս կալը՝ մեզ ոգնում:

Մեր Մշկոն դուռնը չեր պառկում, դեռ-դեռ չեր ընկնում, բարձրանում եր կտուրը, պառկում կտրան ծերին, առաջին թաթիկները յերկարացնում եր դեպի յերդիկը, գլուխն ել դնում եր թաթերի վրա ու պառկում, ախանջը ձենի պահած:

Հենց վոր յեղբայրս զարթնում եր ու լաց լինում, շունը բարձրանում եր հետևի վտաներին, յերեսը դեպի կալն եր դարձնում ու հաջում, կոնծկոնծում:

Մայրս ասում եր.

— Դե՛, յես դնամ, շան հաջոցը գալիս ե, յերեսան զարթնել ե, լաց ե լինում:

Այսպես խելոք, հասկացող, հավատարիմ շուն եր Մշկոն:

21. ՍԵԿՐԵՏԸ ՅԵՎ ԱԼՈՒԺԲԱՆ

1

Ձմռան մի ցուրտ առավոտ սահմանապահ Լեվչեն-կոն անտառի միջով գնում եր դեպի պահակատեղը: Նա իր ծոցում պահել եր լրատար աղափնուն, վորի անունը Սեկրետ եր: Հանկարծ Լեվչենկոն կանդ առավ: Ծառե-րի արանքով գաղտադողի անցնում եր մի մարդ: Նրա կողքից գնում եր շունը: «Լրտես ե», — մտածեց Լեվ-չենկոն և անմիջապես բարձրացնելով հրացանը՝ դուչեց.

— Կանգնի՛ր, ձեռքերդ վե՛ր:

Լրտեսը վախեցավ, ձեռքերը վեր բարձրացրեց, բայց Լեվչենկոն չսկատեց, վոր նա վերաբերուի թեվ-նոցում ատրճառակ ուներ պահած: Լրտեսը կրակեց Լե-չենկոյի վրա: Լեվչենկոն վերափորվեց վտռից և վայր ընկավ: Լրտեսն սկսեց փախչել:

Լեվչենկոն պառկած տեղից սկսեց կրակել լրտեսի վրա: Լրտեսը վայր ընկավ:

Լեվչենկոն խիտ-յն դրեց մի տոմսակ. «Սպանեցի՛

լրտեսի: Ինքս ել վերափորված եմ: Շտապ ձի հասց-
ւե՛ք: Լեվչենկո՛ւ»: Այդ նամակը կապեց աղափնու վո-
որից և բաց թողեց: Լրտեսը, վորն իրեն մեռած եր ձե-
վացրել, կրակեց և սպանեց լրատար աղափնուն:

Աղափնին վայր ընկավ հենց Լեվչենկոյի մոտ:

2

Կրակոցները լսեցին Լեվչենկոյի ընկեր սահմանա-
պահներն, մտոնք մտները ու պատրաստ կանգնած և-



յին: Ծառերից կապված ելին ձիերը, իսկ նրանց մոտ
վազվզում իր շունը, վորի անունը Մլուժբա յեր: Շունն
սկսեց անհանգիստ շարժումներ անել և, մինչև սահմա-
նապահները կնստեյին ձիերը, Մլուժբան կատա-
ղի արագուժյամբ ուղացավ դեպի անտառի ետքը:



Մլուժբան հտոտելով դտավ վերափոր Լեվչենկոյին:

Լեվչենկոն սպանված աղափնին տվեց Մլուժբային
և ասաց.

— Տար մերոնց, միայն վորքան կարող ես, շուտ:

Մլուժբան աղափնին բերանում սլացավ տուշ:

Մլուժբան աղափնին տեղ հասցրեց: Նա պահակա-
տեղի սահմանապահներին հտաով ճանապարհի կեսին:
Պահակատեղի հրամանատարը կարդաց տոմսակը:

տալիս, քնացնում որորոցում, դուռը վրան փակում ու գալիս կալը՝ մեզ ոգնում:

Մեր Մշկոն դռանը չեր պառկում, դեռ-դեն չեր ընկնում, բարձրանում էր կուռըր, պառկում կտրան ծերին, առաջին թաթիկները յերկարացնում էր դեպի յերդիկը, դուռն էլ դնում էր թաթերի վրա ու պառկում, ախանջը ձենի պահած:

Հենց վոր յեղբայրս դարթնում էր ու լաց լինում, չունը բարձրանում էր հետեի վոտներին, յերեսը դեպի կալն էր դարձնում ու հաջում, կոնձկոնձում:

Մայրս ասում էր.

— Դե՛, յես գնամ, չան հաջոցը գալիս ե, յերեսան վարթնել ե, լաց ե լինում:

Այսպես խելոք, հասկացող, հավատարիմ չուն էր Մշկոն:

21. ՍԵԿՐԵՏԸ ՅԵՎ ՍԼՈՒԺԲԱՆ

1

Չմուսն մի ցուրտ առավոտ սահմանապահ Լեվչենկոն անտառի միջով գնում էր դեպի պահակատեղը: Նա իր ծոցում պահել էր լրատար աղավնուն, վորի անունը Սեկրես էր: Հանկարծ Լեվչենկոն կանգ առավ: Ծառերի արանքով գաղտագողի անցնում էր մի մարդ: Նրա կողքից գնում էր չունը: «Լրտես ե», — մտածեց Լեվչենկոն և անմիջապես բարձրացնելով հրացանը՝ դռեց.

— Կանգնի՛ր, ձեռքերդ վե՛ր:

Լրտեսը փախեցավ, ձեռքերը վեր բարձրացրեց, բայց Լեվչենկոն չնկատեց, վոր նա վերարկուի թեկնոցում ատրճառակ ուներ պահած: Լրտեսը կրակեց Լեվչենկոյի վրա: Լեվչենկոն վիրավորվեց վոտքից և վայր ընկավ: Լրտեսն սկսեց փախչել:

Լեվչենկոն պառկած տեղից սկսեց կրակել լրտեսի վրա: Լրտեսը վայր ընկավ:

Լեվչենկոն իսկույն դրեց մի տոմսակ. «Սպանեցի

Լրտեսի: Ինքս ել վիրավորված եմ: Շտապ ձի հասցրե՛ք: Լեվչենկո»:

Այդ նամակը կապեց աղավնու վոտքից և բաց թողեց: Լրտեսը, վորն իրեն մեռած էր Վաչերել, կրակեց և սպանեց լրատար աղավնուն:

Աղավնին վայր ընկավ հենց Լեվչենկոյի մոտ:

2

Կրակոցները լսեցին Լեվչենկոյի ընկեր սահմանապահնեա, մորոնք մոտերքում պատրաստ կանգնած և-



յին: Ծառերից կապված եյին ձիերը, իսկ նրանց մոտ փաղվում էր չունը, վորի անունը Սլուժբա յեր: Շունն սկսեց անհանգիստ շարժումներ անել և, մինչև սահմանապահները կհասնեյին ձիերը, Սլուժբան կատաղի արագությամբ ուղացավ դեպի անտառի ետքը:



Սլուժբան հոտոտելով դատավ վիրավոր Լեվչենկոյին:

Լեվչենկոն սպանված աղավնին տվեց Սլուժբային և ասաց.

— Տար մերոնց, միայն վորքան կարող ես, չուտա՛ր Սլուժբան աղավնին բերանում սրացավ առաջ:

Սլուժբան աղավնին տեղ հասցրեց: Նա պահակատեղի սահմանապահներին հասավ ճանապարհի կեսին: Պահակատեղի հրամանատարը կարդաց տոմսակը:

— Ի՞մ հետեից, — գոչեց նա սահմանադահներին
և առաջ սլացավ:

Սլուժքան սահմանադահներին բերեց լրտեսի հեռ-
քերով: Սահմանադահները չըջապատեցին լրտեսին և
չորս կողմից գոչեցին.

— Ձեռքերդ վե՛ր:

Լրտեսը տեսնելով, վոր բանը վատ է, փրկության
հույս չկա, հանձնվեց:



Լեվչենկոյին տարան հիվանդանոց: Շուտով նա ա-
ռողջացավ:

Յենիթաչեֆ պիոներական կոլեկտիվը հերոս Լեվ-
չենկոյին նվիրեց լավ վարժեցրած յոթսուց մի ազգամիջ:
Լեվչենկոն սիրով ընդունեց այդ նվերը և անունը կրկին
Սեկրետ դրեց:



22. Գ Ի Շ Ն Ի

Գեղեցիկ ու դով
Գիշեր և պայծառ,
Անուշիկ քնով
Քնած և աշխարհ:


Ծառերը մեղմիկ
Քամուց ուրբվում,
Հեղիկ ու նաղիկ
Յերդ են ավսվում:

Իսկ լայնատարած
Յերկնակամարով
Լուսինն է կամաց
Անցնում սահելով:

Աստղերն էլ սիրուն
Ժպտալով փայլում,
Իրենց սիրելուն
Ճամփա յեն զնում:

Գեղեցիկ ու դով
Գիշեր և պայծառ,
Անուշիկ քնով
Քնած և աշխարհ:

Ու քնած յերկրին
Ծառերն ու առուն
Յերդով միասին
Որոր են ասում...



23. ՓՈՔՐԻԿ ԳՈՐԾԱԿԱՏԱՐԸ

— Տառի՛կ ջան, արի խաղանք, — խնդրում ե փոքրիկ Յերվանդը:

— Լավ, խաղանք, — համաձայնեց տատիկը:

— Կոոպերատիվ խաղանք հա՞, տատիկ:

— Լա՛ւ, կոոպերատիվ խաղանք:

Ու Յերվանդը վազեց, քաշ տվեց մի յերկու աթոռ, շարեց իրար կողքի:

— Ես սեղանը:

Վրան դարսեց տուփեր, գրքեր, լրագրեր, քրոջ տիկնիկը, իր հոյը, ուրիշ խաղալիքներ, ելի տուփեր, ելի գրքեր, մի յերկու հատ ել չիշ, իր խնձորը, վոր դեռ չեր կերել, հետո իր փոքրիկ զրջահատը:

Կոոպերատիվը պատրաստ եր:

Վազեց, կողքի սենյակից բերեց տատիկի մեծ, գունավոր թաշկինակը, գոգնոցի պես կապեց առաջն ու կանգնեց:

— Շաքար ունե՞ս, ընկե՛ր, — հարցրեց տատիկը:

— Ինչքան քեֆդ ուղի, մայրիկ, — պատասխանեց գործակատարը:

— Լա՛ւ, մի հինգ մետր տուր:

Փոքրիկ վաճառողի ծիծաղը յեկավ:

— Ներեցեք, ընկե՛ր, մենք շաքարը մետրով չենք ծախում, — տալիս եմ քաղաքավարի կերպով:

— Հապա ինչո՞ւ, — հարցրեց տատիկը:

— Կիլոյով:

— Կիլոյով: Հա, ճիշտ վոր, — տալիս եմ տատիկը: Դեհ, խնդրեմ, ինձ մեկ կիլո շաքար տուր, մեկ կիլո ել գինի:

— Ներեցեք, մայրիկ, — ժպտաց գործակատարը, — մենք ղինին կիլոյով չենք ծախում:

— Հապա ինչո՞ւ, — հարցրեց տատիկը:

— Գինին ծախում ենք շշով:

— Շշով: Հա, ճիշտ վոր: Դեհ, ինձ յերկու չիշ գինի տուր, տատը չիշ ել ձու:

Փոքրիկ վաճառողն այս անգամ արդեն փոթկաց:

— Ներեցեք, ընկե՛ր, մենք ձուն չշով չենք ծախում:

— Հապա ինչո՞ւ, — հարցրեց տատիկը:

— Ձուն ծախում ենք հատով:

— Հատով: Հա, ճիշտ վոր: Դեհ, ինձ տատը հատ ձու տուր, յերեք հատ ել կաթ:

— Ներեցեք, ընկե՛ր, կաթը մենք հատով չենք ծախում:

— Հապա ինչո՞ւ, — հարցրեց տատիկը:

— Կաթը ծախում ենք բաժակով:

— Բաժակով: Հա, ճիշտ վոր: Դեհ, ինձ յերեք բաժակ կաթ տուր, վեց բաժակ ել լուցիկ:

Յերվանդը ծիծաղից թուլանում եր:

— Ներեցեք, մենք լուցիկն բաժակով չենք ծախում:

— Հապա ինչո՞ւ, — հարցրեց տատիկը:

— Լուցիկն ծախում ենք տուփով:


— Տուփով: Հա, ճիշտ վոր: Այսոր ինչքա՞ն բան սովորեցի: Դեհ, ինձ վեց տուփ լուցիկ տուր, չորս տուփ ել կարմիր բոզի:

— Ախար, ընկեր, — ծիծաղում ե վաճառողը, —
ս՞ով ե լսել՝ բողկը առափով ծախեն:

— Հապա ինչո՞վ, — հարցրեց առափիկը:

— Բո՞ղկը, բո՞ղկը... կմկմաց Յերվանդն ու չխմա-
ցավ, թե ինչով ծախի բողկը:

ՀԱՆՆԵԼՈՒԿ. — Աման ունեմ մի պուճուր,
մեջին յերկու դույնի ջուր:



24. ՀՈՎՎԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Մնաք բարով, դուք, արոտներ սիրուն,
Ամառն անց կացավ, հոտն իջնում ե տուն:

Մենք կզանք ձեզ մոտ նորեկ դարունքին,
Յերբ զարթնեն ուրախ յերգերը կրկին,
Յերբ վոր սարերը զուգվեն կանաչով,
Յերբ վոր ջրերը վազեն կարկաչով...

Մնաք բարով, դուք, արոտներ սիրուն,
Ամառն անց կացավ, հոտն իջնում ե տուն:



25. ՅԵՂԲԱՅՐԻԿՆԵՐ

Տե՛ս սեամորթ մայրիկին՝
Ի՛նչ ե յերգում բալիկին.

— Գիշեր ե դալիս,
Քուն դնեմ բալիս.
Հայրիկդ չկա—
Նա դեռ ուշ կգա.
Ոյ-լա՛:

Յերբ դու մեծանաս,
Շուտով կիմանաս,
Վոր լայն աշխարհում
Մենակ չես ապրում.
Ոյ-լա՛:

Ընկերներ ունես
Մի հսկա բանակ.
Քնիբ, ի՛մ բալիկ,
Չես մնա մենակ:




Տե՛ս գեղեամբորթ մայրիկին՝
Ի՛նչ է յերգում բալիկին.

Զի՛ն-ձի՛ն
Յո՛ւ-ձի՛ն,
Ի՛նչ ծանր բեռ է
Դրած իմ վզին:
Մեծացիր, բալիկ,
Որեւը դալիք
Չեն լինի ախպես.
Յեղբայրներ ունես
Քեզ կուռ ու կռնակ...
Մենակ չես, մենակ...
Զի՛ն-ձի՛ն
Յո՛ւ-ձի՛ն...

Տե՛ս աղիտակ մայրիկին՝
Ի՛նչ է յերգում փոքրիկին.

Բա՛յ-բա՛յ,
Ի՛մ կենիկ,
Շուտով մեծանաս.



Ուժեղ պատանի,
Բանվոր կդառնաս.
Բայց չմոռանաս—
Յեղբայրներ ունես,
Նրանց ել պիտի
Լույս աշխարհ հանես
Բա՛յ-բա՛յ,
Իմ բալիկ,
Բա՛յ-բա՛յ,
Իմ կենիկ:

26. ԴԺՎԱՐ ԱՇԽԱՏԱՆՔ


Քեռի Թոմի ընտանիքը մեծ է, կարիքն—անպակաս:
Նա ծանր աշխատանքով է վաստակում իր օրվա ապ-
րուստը:

Քեռի Թոմը ծխնելույզ մաքրող է. նա իր աղային,
փոքրիկ Զիմին, ընտելացնում է այդ աշխատանքին.
չատ կցանկանաք նրան աշխատանքի շտանել, բայց ըս-
տիպված եր:

Ամբողջ որը նրանք աշխատում են բարձր շենքերի
կառույցների վրա: Նրանք յերկուսն էլ սև են, ինչպես
ծխնելույզի պատերը:

Աշխատանքը ծանր է, խսկ փոքրիկի համար ուղղա-
կի անտանելի:

Քեռի Թոմը յերկար պարանը կապում է Զիմի մեջ-
քին և իջեցնում նրան ծխնելույզի մեջ: Զիմը փոքրիկ



Թաթիկներով մաքրում է ծխնելույզի պատերի մուրը:
Ծխնելույզից Զիմը դուրս է գալիս բոլորովին սևա-
ցած ու մրուրված:

Նա աղահարար սկսում է շնչել մաքուր ոդը:

— Այստեղ լավ է, հա՞, Զիմ, — հառաչում է հայ-
րը:

— Շատ լավ է, — ասում է Զիմն ու աշխատում
ուրախ յերևալ:

Աշխատանքը ծանր է, բայց Զիմն անտրտունջ ող-
նում է հորը:

27. ՏԵՐԵՎԱԹԱՓ

— Ա՛յ փոքրիկներ, ա՛յ սիրուններ, —
Ասավ քամին տերևներին.

— Աչունն յեկավ, մոտ է ձմեռ,
ի՞նչ եք դողում ծառի ծերին:
Վոսիկ, դեղին, վառ ծիրանի
Գույներ հազեք խայտարկետ
Ու ճյուղերից ձեր մայրենի
Յեկեք ինձ հետ, փախեք ինձ հետ...
Յեկեք տանեմ հեշտ ու անթև,
Անհետ ծամփով, անհայտ տեղեր,
Չեք իմանա այսուհետև
Ել ինչ ե դող, ինչ ե ձմեռ...

Տերևները հենց լսեցին,
Նախշուն-նախշուն դույներ հազան,
Սվալավով ախուր յերգեր՝
Քամու թևին թռան փախան:



28. ՀԵՌԱՆՈՍԸ

Տանը մարդ չկար: Լեւիկը մնացել էր մենակ: Հանկարծ հայրիկի սեղանի մոտ կախված հեռախոսը ծննդ-ծննդաց:

Լեւիկն ուրախացած բարձրացավ աթոռի վրա և հեռախոսի խողովակը վերցրեց:

«Դը՛ռը», — լավեց խողովակի միջից:

Լեւիկն ականջ դրեց:

Վոչ վոք չխոսեց: Միայն «դըռըռը» էր լսվում:

Լեւիկը ժպտաց և հայրիկի նման հարցրեց:

— Կենտրո՞ն... կենտրո՞նն է:

Խողովակի միջից լավեց.

— Այո՛:

Լեւիկը նորից ժպտաց ու մտածեց, թե ի՞նչ ասի ու միտքն ընկավ մորաքրոջ հեռախոսի համարը:

— Տվե՛ք, խնդրեմ, 16:

— Պատրաստ ե, պատասխանեցին խողովակից: Նորից լավեց, «դըռըռ»...

— Սարգսյանի բնակարանն է. ո՞վ է խոսում, — հարցրեց մեկը.

Լեւիկը ձայնից ճանաչեց մորաքրոջը:

— Յեւ եմ խոսում, մորաքույր — Լեւիկը:

— Ի՞նչ կա, Լեւիկ ջան: Լա՛վ ես:

— Լավ եմ, մորաքույր: Դու ի՞նչ պես ես:

— Լավ եմ, — ծիծաղեց մորաքույրը:

Լեւիկը մտածեց՝ ել ինչ ասի ու հիշեց, թե ինչպես մայրը յերբեմն խոսում էր, և ասաց.

— Եսոր, մորաքույր, համեցե՛ք մեզ մոտ ճաշի: Անպատճառ: Թող Անիկն ել գա, Նինեն էլ, Նինելի հայրիկն էլ... Չուշանաք հա՛. կպասենք...

Վերջացրեց, խողովակը կախեց և ուրախ-ուրախ լիջով աթոռից: Նա ուրախ էր, վոր կարողացավ առանց մայրիկի և հայրիկի ոգնության խոսել:

«Իսկ մայրիկն ասում է, թե չես կարող մենակ խոսել... Տեսա՛ր»...

Ճաշին մորաքույր Մարոն, նրա աղջիկները՝ Անիկը, Նինելը, և Նինելի հայրիկը յեկան:

— Ես ի՞նչպես ե, վոր մեզ հիշեցի՛ք, — ասաց մայրիկը:

— Հրավիրեցի՛ք ճաշի, մենք էլ յեկանք, — պատասխանեց մորաքույր Մարոն:

— Յե՛ւ եմ հրավիրել, մայրի՛կ, յես, — ասաց Լեւիկը: Հեռախոսով հրավիրեցի:

29. ՅՈՐՆԱՏԵՐՆ ՈՒ ԶԱՂԱՅՊԱՆԸ

1

Մեկը ցորեն տարավ ջաղաց,
Եղ ցորենից ալյուր աղաց.
Ջաղացպանն էլ բաղարջ յեփեց,

Թորնից հանեց, մեջտեղ դրեց.
 — Արի պատմենք մի-մի լավ բան.
 Ումը լինի սուր, դուրեկան, —
 Ես բաղարջը թող նա ուտի.
 Ու չնայենք դորթի, ստի:

2

Յորնատերը՝ թե յես կասե՛մ.
 Զաղացականը՝ յես կլսե՛մ:
 — Մենք ունեյինք մի մեծ աքլար,
 Վորի նմանն իսկի չկար.
 Հերու եր թե մեկել տարին,
 Քեռիս հեծավ եղ աքլարին,
 Գնաց Լոռի՝ ցորեն բերի:
 Ճանապարհին չի նկատում —
 Մի դայլ ձիու կողքն է ուտում,
 Գնում քեռիս ուռ է բերում
 Ու աքլարի կողը գործում.
 Նորից հեծնում եղ աքլարին,
 Ման է գալիս կլոր տարին,
 Ու հաղար փութ ցորեն բարձած,
 Ինքն ել բեռան վրա նստած՝
 Գալիս կանգնում է մեր դռան:
 Մենք շինեցինք մի յելարան,
 Յելանք, քեռուս ներքե բերինք,
 Բեռով ցորենն ել ներս դրինք:
 Են ցորնիցն է, վոր դու ահա
 Ես բաղարջն ես թխել հիմա:

3

Զաղացականը՝ թե յես կասեմ
 Յորնատերը՝ յես կլսեմ.
 — Մենք ունեյինք մի մեղրաճանձ,
 Համ պող ուներ, համ ել ախանջ:

Մեկ որ ճանձը փախավ տանից,
 Հորս սարապ արավ բանից.
 Հայրս քրտնած դարձավ գեղը,
 Մորիցս առավ մեծ տակը,
 Տարավ տնկեց գոմի կարան
 Ու զույգ վոտով յելավ վրան.
 Տեսավ հեռուն՝ դաշտի միջին,
 Վոր գութան են լծել ճանձին:
 Տուն տնովի դաշտ վազեցինք,
 Պռչից բռնած տուն քչեցինք:
 Տրորել եր ճանձն իր ուտը,
 Զարդեց մայրս տան ընկուղը
 Ու ընկուղից հանած յեղը,
 Քսեց ուսի ցաված տեղը:
 Իսկույն ուսից բուսավ մի ծառ,
 Ծառին իջավ ագռավը թառ.
 Մի հողի կոշտ քեռիս առավ,
 Ես ագռավին վրա արավ.
 Կոշտը ցրվեց, դարձավ մի հող՝
 Մի որավար վարեղահող:
 Յերբ վոր յեկավ, հասավ մարտը,
 Յորեն արինք մենք են արտը.
 Մտանք հունիս, ընկավ քաղը,
 Յես վեր սուս սուր մանգաղը,
 Մտա արտը ու քաղեցի,
 Բայց դեմ ընկա մի մեծ քարի —
 Քարի վրա փորված դրի.
 «Ա՛յ ցորնատեր, վա՛յ քո բանին,
 Բաղարջը տուր ջաղացականին»:
 Յորնատերը քիթը կախած,
 Ալյուրն առավ, գնաց քաղցած:

ԱՌԱՅ. — Սուտ ասողի տունը կրակ ընկավ,
 Վոչ վոք չհալատաց:

30. ՀԵՐՈՍ ՀՈՎԻԿԸ

Բառարդեհարի շրջանի յայլաներում հանկարծակի տառնամանիք սկսվեց և ձյուն տեղաց: Մեծ Ագիզլու գյուղի կոլտնտեսականները շատ անհանգստացան: Ներանց անասունները սարումն էյին: Թե անասունների և թե կոմյերիտական հովիվ Այդին Մամեղովի վիճակը լուրջ էր:

— Կկտորվեն անասունները, — ասում էյին նրանք:

— Այդինն ինքն ել կառնի մինչև ողնության հասնելը, — խոսում էյին մյուսները:

Մինչ այդ, Այդին Մամեղովը հազթահարելով բուք ու բորանը, հաջողությամբ գյուղ իջնցրեց իր նախիրը:

Կոլտնտեսականները ուրախացած գիմալորեցին Այդին և գովեցին նրա խիզախությունը:

Յերբ անասունները գոմերն սրին, պարզվեց, վոր կովերից մեկը չկա:

Այդինն առանց հանգստանալու նորից սար բարձրացավ: Յերկար վորոնելուց հետո դուռ վորը ձյան տակ:

Առանց հուսահատվելու նա կրկին գյուղ վերադարձավ, անկողին վերցրեց ու նորից սար դնաց:

Գիշերը մնաց կովի մոտ, տաքացրեց ու կերակրեց նրան: Չնայած ցուրտը տարավ նրա մատները, սակայն Այդինը հերոսաբար մնաց իր դիրքում և կուկետիվ տնտեսության դույքը փրկեց կորստից:

Հերոս հովվին պարզեվաորեցին և ուղարկեցին բուժփելու:

Վորպես ժողովրդի արժանավոր զավակ՝ Այդին Մամեղովը Հայաստանի աշխատավորության կողմից ընտրվեց Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի անդամ:

31. ԴԺՎԱՐ ՏԱՐԻ

Վարի, գութան ջան, վարի,
Շատ ե դժվար ես տարի:

Պապին տարան քյոխվի դուռ,
Հարկ են ուզում. — Տուր, հա՛ տուր...

— Կտամ, քյոխվա, փող չունեմ...

— Չունե՞ս, Շեկոն կտանեմ:

— Աման քյոխվա, քեզ դուրբան,

Շեկոն դեռ թող գութան,

Գարնան անկնք վար ու ցանք,

Կալը կալսենք բերենք, տանք:

Գարունը յետ գառափ ել,

Գութան լծվեց՝ հորովել...

— Վարի, գութան ջան, վարի,

Դատենք ցորեն ու գարի,

Տանենք, ածենք քյոխվի փեշ,

Վոր չտանի մեր գոմեշ:

32. ՔՆԱՐԻԿԸ ՀԵՂԱՓՈՆԱԿԱՆ

1

Թագավորի ժամանակ հայրս գրաշար էր, իսկ մայրը՝ դերձակուհի: Հայրիկս հեղափոխական աշխատանք էր տանում: Յես տասներկու տարեկան էյի, յերբ այս դեպքը պատահեց:

Մի յերեկո հայրս ուրախ-ուրախ ներս մտավ ու մորըս ախանջին չչնջաց (այդ ժամանակ յես ննջում էյի):

— Ճարեցի. վաղը հազար թուղցիկ ենք տպելու: Մեր ընկերներն այդ թուղցիկները կցրեն բանվորներին:

Նա արձճե տառերը թափեց սեղանին:

Յես գլխի ընկա. այդ տառերով հեղափոխական բանվորները թուղցիկներ էյին տպելու թագավորի դեմ:

Գնեցի: Մեկ ել ընիս մեջ զգացի, վոր մեկը չարժում ե բարձս: Աչքերս բաց արի—տեսնեմ մայրիկս սփրթնած կանգնել և դլխավերև ու ինչ-վոր բան ե թաղցնում բարձիս տակ: Հարեան սենյակում ծանր վռտնաձայն լսեցի:

Մայրիկ, — հարցնում եմ կամացուկ, — ի՞նչ ե պա-
տահել:

— Վոչինչ, դու քնիր, աղջիկս, տունը խուղարկում
են: Ո՞վ գիտե, գուցե թե քեզ ձեռք չտան...

Ձեռքս կոխեցի բարձիս տակ — տեսնեմ կապոցով
տառեր են:

Ի՞նչ անեմ, — մտածում եմ: — Յեթե գտնեն՝ վայ
մեզ: Պահե՞մ, բայց վո՞րտեղ: Պահարանո՞ւմ: Վառա-
րանո՞ւմ... Իսկ յեթե գտնեն...

2

Հանկարծ գլխի ընկա: Լուսամուտում դրված ե կա-
թով լիքը կճուճը: Մոտեցա մի լավ խմեցի կաթը, կը-
ճուճում կաթը պակասեց և յես տառերը կճուճի մեջն
ածեցի: Հանդստացա ու նորից պառկեցի իմ մահճակա-
լում:



Ներս մտան վոստիկանները, տակն ու վրա արեցին,
ինձ ել տեղիցս հանեցին: Յերբ քրքրում եյին անկո-

ղինս, մայրս դողում եր, իսկ հայրիկս գունատված
կանգնել եր:

Բան չգտան և դժգոհ հեռացան:

— Ա՛յ քեզ բան, — ասաց հայրիկը ժպտալով. —
տառերը կարծես թե չքացել են:

Յես քրքջացի ու դուռացի.

— Վոչ թե չքացել են, այլ կաթի մեջն են տառերը:
Հայրիկս վաղեց, վերջրեց ծանր կճուճն ու հարց-
րեց.

— Ուրեմն, Գնարիկ, դո՞ւ յես այստեղ թաղցրեղ
իմ ուրախությանը չափ չկար:

Մայրիկս անվերջ համբուրում եր ինձ, իսկ հայրի-
կըս սեղմեց կրծքին ու ասաց.

— Ապրես, աղջիկս. դու լավ հեղափոխակամ
կդառնաս:


33. ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Յեղիբ, ում կյանքը անիծել ե,
Ով ճորտ ե, մերկ ե և ստրուկ:
Արդեն վառվում են մեր սրտերը,
Արդեն կռվի յենք մենք ձգտում:

Այս հին աշխարհը կփոքենք մենք
Մինչև հիմքերը և հետո
Մեր նոր աշխարհը կշինենք մենք,
Ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:

Սա յե վերջին կռիվը
Յեվ պայքարը մեր մեծ,
Իստերնացիոնալը
Աշխարհը կփրկե:

(Խտալական բանտում)



Վ. Ի. ԼԵՆԻՆ

Մեկ անգամ ինձ ձերբակալեցին և ուղարկեցին բանտ: Շատերի հետ բանտարկված եր նաև մեկ ղինվոր: Գիշերը նա շատ անհանդիստ քնեց: Շատ եր դեպքէն դնում և սեղանն ու աթոռը շարժում:

Լուսաբացին յես նրան հարցրի.

— Ինչո՞ւ եյիր գիշերն անհանդիստ:

Նա չարտասխանեց, մեղմ ծպխտով նայեց ինձ ու զլխով ցույց տվեց դեպի պատը:

Պատի վրա խոշոր տառերով գրված եր.

— Կեցցե՛ Լենինը:

— Ո՞վ ե գրել, — հարցրի նրան:

— Յես, — հարաուսթյամբ պատասխանեց նա:

Շուտով զարթնեցին և մյուս բանտարկյալները: Բոլորը կարգացին ղինվորի դրածը: Ներքին մի լուռ հրճվանքով նրանք արտահայտում եյին իրենց խոր հարգանքը դեպի այդ տնուեր:

Քիչ հետո ներս մտավ բանտի վերակացուն: Նա նույնպէս կարգաց պատի վրա գրածը:

— Ո՞վ ե գրել, — զայրույթով հարցրեց նա:

Բոլորը լուռ եյին:

Վերակացուն բերել տվեց մի ներկարար, վորը ներկով ծածկեց գրված բառերը:

Յերբ չորացավ ներկը, նրա տակից նույնությամբ կարդացվում եր.

— Կեցցե՛ Լենինը:

Կատաղած վերակացուն կրկին անգամ ներկով ծածկել տվեց գրվածը:

Սակայն ներկը չորանալուց հետո նորից պարզ կարդացվում եր.

— Կեցցե Լենինը:

Կատաղությունից իրեն կորցրած վերակացուն այս անգամ քարտաշ բերել տվեց և հրամայեց քերել գրածը:

Քարտաշը քերեց պատին գրված տառերը: Տառերը փոս ընկան և չնայած դույնը գցեցին, բայց այս անգամ ավելի տարզ ելին կարգացվում:

— Կեցցե Լենինը:


Զինվորը ժպտաց և հրճվանքով բացականչեց:

— Այդ անունը ջնջել չի լինի:

35. ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԸ ՅԱՐԻՑԻՆՈՒՄ

Յարիցիներ շրջապատված եր թշնամիներով: Կարմիր բանակայինները կռվում էին հերոսաբար: Նրանցից ամեն մեկի մեջ կար միայն մեկ ցանկություն: Յարիցիներ չհանձնել թշնամուն:

Յեթե Յարիցիներ հանձնվեին թշնամուն, այդ նշանակում եր՝ ճանապարհը դեպի Մոսկվա փակել և ժողովրդին թողնել առանց կենսամթերքի:




Կարմիրները հալաքելով իրենց ամբողջ ուժերը, պաշտպանեցին Յարիցիներ սպիտակներից: Սարսափելի դժվար եր այդ, վորովհետև թշնամու բանակն իր թվով տասն անգամ շատ եր կարմիրներից:

Սակայն ընկեր Լենինը գիտե՞ր՝ ով կարող ե փրկել Յարիցիներ: Նա այնպեղ ուղարկեց ընկեր Ստալինին:

Ստալինը կանգնեց մեր ղորքերի գլուխը, իսկ նրա ուղնականները յեղան Վորոշիլովը և Բուդյոնին:

Ստալինը և Վորոշիլովն անմիջապես անցան կռվի դաշտը:

Յերբ մարտիկները տեսան Ստալինին և Վորոշիլովին:



Ընկեր Ստալինը և ընկեր Վորոշիլովը Յարիցիների խրամամերում

Վին, նրանց ուժը կրկնապատկեց: Նրանք մոռացան քաղցն ու հոգնածությունը: Ամեն մեկը պատրաստ եր կռվել թշնամու տասը զինվորի դեմ:

Շուտով մեր բանակը թշնամուն ջախջախեց: Յարիցիներ փրկված եր:

Յարիցիներ կոչվեց Ստալինգրադ:

1

Ծերունի Հաշիմը բնիկեր Ստալինի հին բարեկամներէն էր:

Շատ հաճախ Հաշիմի հարեւանները տեսնում էին, թե ինչպէս նրա տունն էին գալիս չադրայով ծածկւած կանայք: Ինքը Հաշիմն ել հաճախակի դուրս եր գնում տնից կանաչեղենով լի դամբյուղը բռնած:

Այդ չադրաների տակ ծածկւած «կանայք» տղամարդիկ էին, դրաշարներ, վորոնք աշխատում էին բնիկեր ՍՍՍՈՅԻ (ՍՏԱԼԻՆԻ) հետ միասին զաղտնի տպարանում, իսկ Հաշիմի դամբյուղում կանաչեղենի հետ միասին գտնւում էին հետաքրքրական իրեր...

Հաշիմը վոչ միայն իր մօտ թագոյնում եր հեղափոխական բնիկեր ՍՍՍՈՅԻՆ և նրա տպարանը, այլ և այդ տպարանում տպագրւածը տանում եր, ուր հարկն եր:

2

Հաշիմը ՍՍՍՈՅԻ հանձնարարությամբ թերթիկներ ու թուղցիկներ եր տարածում գյուղացիների և բանվորների շրջանում: Թուղցիկները նա թագոյնում եր մրգերով ու բանջարեղենով լիքը դամբյուղի մէջ:

Ճարրիկաններում և գործարաններում Հաշիմը «մրգեր» եր փաճատում և յերր նրան մօտենում էին անծանօթ գնորդներ, Հաշիմը փնթփնթում եր.

— Ե՛ր, դառը կյանք: Ինձ, ծերունուս ես եր պահաս, վոր մրգեր քաշ տամ սեփական մեջքի՛ս: Բայց ի՛նչ արած, անիծված չքափորությունն ստիպում ե:

Իսկ իր իմացած գնորդներին նա մրգերը տալիս եր փաթաթելով թերթիկում և թուղցիկում՝ առանց սովելորդ խոսքերի:



37. ԸՆԿԵՐ ՎՈՐՈՇԻԼՈՎԸ ԳՆԻԱՅՐԻ ՄՈՏ

Այս դեպքը պատահեց 1920 թ. հոկտեմբերին:

Սպիտակներն աշխատում էին մօտենալ Վոլգային, գրավել Ցարիցին քաղաքը (այժմ Ստալինգրադ):

Յերեկոյն, կայարանում կուտակւել էին մեծ թվով ապրանքային գնացքներ:

Վազոնների մեջ պսոկել էին վիրաւոր բանակաւորները, իսկ մյուս վազոններում խաղաղ բնակիչները, վորոնք փախել էին սպիտակների գրաված վայրերից: Այդ փախստականները գլխավորապէս ծերեր էին, կանայք և յերեխաներ: Նրանց պահպանում և խնամում էին կարմիր բանակայիները:

Ճակատի հրամանատար Կլիմ Վորոշիլովը յեկավ կայարան: Շտաբի վազոնում կարմիր զորամասերի հրամանատարներին հետ նա քննում եր կովի ծրագիրը:

Հանկարծ խրամատներն այն կողմից լավեց աղմուկ,
կանչ:

— Փրկեցե՛ք... կաղակնե՛րը...

Ընկեր Վորոշիլովը և հրամանատարները վազոնից
դուրս թռան:

Փախստականները վազ տվին կայարանի այս ու
այն կողմը:

Կայարանին արդեն մոտեցել էին սպիտակ կապալ-
ները: Նրանք չափազանց շատ էին: Ի՞նչ անել:

Ընկեր Վորոշիլովին ձի բերին:

— Դեպի թշնամին կրակել, — հրամայեց ընկեր Վո-
րոշիլովը:

Կարմիր բանակայիններից մի ջոկատ պատրաստվեց
մարտի:

Ընկեր Վորոշիլովին անսպասելիորեն նկատեց պատի
մոտ մի մոռացված գնդացիր:

Յերկու-յերեք րոպե եր պետք փամփուշտների ժա-
պավենը գնդացրին հագցնելու համար:

Ընկեր Վորոշիլովը գնդացիրն ուղղեց դեպի հակա-
ռակորդը և սկսեց կրակել:

Թշնամին խառնիխառն փախուստի դիմեց:

Շատ քչերը կարողացան պրծնել Վորոշիլովի դի-
պուկ գնդակից:

Իդուր չե, վոր մեր յերկրի լավագույն հրաձիգնե-
րին անվանում են «Վորոշիլովյան հրաձիգ»:



38. ՖՐՈՒՆԶԵՆ ՄԱՐՏՈՒՄ

Միխայիլ Վասիլյեվիչ Ֆրունզեն քաղաքացիական
պատերազմի տարիներին 4-րդ բանակի հրամանատարն
էր:

Մի անգամ սպիտակները հարձակվեցին կարմիրնե-
րի առաջապահ ջոկատի վրա: Մարտիկները խուճապի
մատնվեցին և ուզում էին հետ նահանջել, վորովհետեւ
անհրաժեշտ քանակությամբ փամփուշտներ չունեին:

Բայց հանկարծ ջոկատում յերեսց ընկեր Ֆրունզեն:


Նա կայծակի արագությամբ մեկ կարմիր բանակա-
յինի ձեռքից հրացանը վերցրեց և առաջ ընկնելով՝ բա-
ցականչեց:

— Առա՛ջ, առա՛ջ, ընկերներ՛ր...

— Ֆրունզեն մեզ հետ է, ուռա՛, առա՛ջ, — այս ու
այն կողմից լավեցին սրտապնդված ձայներ:

Ամբողջ ջոկատն անզուսպ հեղեղի նման վազ տվեց
իր անվեհեր հրամանատարի հետևից:

Սպիտակները լավ ջարդ կերան և հետ շարտվեցին:



39. ԲՈՒԳՅՈՆՆԻՆ ՅԵՎ ՍՊԻՏԱԿՆԵՐԸ

Այնպես պատահեց, վոր հետախուզության ժամանակ Բուդյոննին մի գյուղ մտնելիս՝ դեմ առ դեմ հանդիպեց սպիտակներին: Խուսափել անհնար եր, սպիտակները կկրակեյին հետեից՝ կսպանելին:

Բուդյոննին մտածեց. «Կորած ենք, յեթե հնարագետ չլինենք» — ու նայեց իր հետ ծուղակն ընկած ընկերքին:

Սպիտակները կարծեցին, թե իրենցից են, միայն անձանոթ: Ապա մի քիչ շփոթվեցին: Բուդյոննու ձին նման եր կարմիր բանակայիների ձիերին. պոչը խուզած եր:

— Ես ի՞նչ ե, ձիդ նման ե Բուդյոննու ղինվորների ձիերին:

— Այո, — ընդհատեց Բուդյոննին. — սա յես խելեմ կարմիրներից:

Սպիտակները համառացին, առանց մտածելու, վոր հետները խոսում ե հենց ինքը՝ Բուդյոննին:

— Դե, ներս յեկեք՝ ընթրենք, — հրավիրեցին նրանց:

Բուդյոննին ընկերով հետ ներս մտավ: Ընթրիքի ժամանակ սպիտակները գովում եյին իրենց գլուխը:

— Բուդյոննու ճանաչում ենք. ձին ել ե ծանոթ: Վոր հանդիպենք՝ վողջ-վողջ կբռնենք:

— Յես ել եմ ճանաչում, — ասաց Բուդյոննին: Մի անգամ ուզում եյի դերի վերցնել, բայց ձեռքիցս չուտ դուրս պրծավ:

Քիչ հետո Բուդյոննին և ընկերը բախ դուրս յեկան: Վոչ վոք չկար: Նրանք թույն ձիերին ու անհետացան:

Այս հանդիպումը զուր չանցավ. նա վերջրեց մի վաչա ու հարձակվեց այն գյուղի վրա, վորտեղ քիչ առաջ ընթրում եր սպիտակների հետ:

Սպիտակները դիմադրեցին, բայց զուր: Բուդյոննին բոլորին դերի վերցրեց:


40. ՉԱՊԱՅՅՎ

Մեկ անգամ Չապայեվը մարդատար ավտոմոբիլով դնաց հետախուզության:

Շուտով նա մտնեցավ մի գյուղի: Հավանական ե, վոր այդտեղ մերոնք կլինեն, մտածեց նա և կարգադրեց չոփերին ավտոյով մտնել գյուղը:

Հանկարծ փողոց թափվեցին սպիտակները: Ճանաչելով Չապայեվին՝ նրանք հարձակվեցին ավտոմոբիլի վրա:

— Չես աղափլի մեր ձեռքից, — գոռում եյին սպիտակները:



— Ավտոն վարել չըջանաճե, — կարգադրեց Չապայեվը շոֆերին և սպիտակներին գիմալորեց գնդացրային կրակով:

Շոֆերն ավտոն պտտում եր գյուղի շուրջը, իսկ Չապայեվը կպած գնդացրին, գնդակներով հնձում եր սպիտակների շարքերը:

Սպիտակները խուճապի մատնվելով նահանջեցին:

41. ՀՈԿՏԵՄԲԵՐ

Այսօր նորից ենք տոնում
Քո մեծ տոնը, Հոկտեմբեր.
Դու ավել ես բոլորին
Յերջանիկ կյանք, լավ որերը:

Մեր յերկիրը լայնարձակ
Ծաղկափթիթ մի պարտեզ,
Ուր պայծառ ե կյանքը նոր
Վառ արեփի լույսի պես:

Քեզ ծնել են ու սնել
Լենին պապին թանգազին
Յեւ հարազատ Ստալինը —
Առաջնորդը մեր անդին:

Այսօր, գվարթ քո տոնին,
Առած կարմիր դրոշներ,
Մենք գոչում ենք միաձայն՝
Կեցցե՛ կարմիր Հոկտեմբեր:



42. ԸՆԿԵՐ ՈՐՋՈՆԻԿԻՉԵՆ ՅԵՎ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

«Մամատուչկա» գործարանի պիոներները 1934 Մվի ամառը հանգստանում էին ծովափի լազերներից մեկում: Լազերից մի քանի կիլոմետր հեռու, սանատորիայում հանգստանում էր ընկեր Սերգո Որջոնիկիձեն:

Պիոներները վորոչեցին պատգամավորներ ուղարկել ընկեր Որջոնիկիձեյի մոտ խնդրելու, վոր նա ներկա լինի լազերի փակման հանդեսին:

Պիոներները իրենց հետ ընկեր Որջոնիկիձեյին նվճիրներ տարան— ծաղիկներ և մետաքսյա փողկապ պիոներական նշանով:

Պիոներները հանդիպեցին ընկեր Որջոնիկիձեյին խճուղու վրա, ավտոմոբիլում: Որջոնիկիձեն տեսնելով նրանց՝ նշան արեց չոփերին, վոր մեքենան կանգնեցնի: Մեքենան կանգնեց, և ընկեր Որջոնիկիձեն սպասում էր, թե ի՞նչ պետք է տան պիոներները: Բայց բոլորն ուրախությունից չզիտեյին՝ ինչից սկսել:

Ընկեր Որջոնիկիձեն զգալով այդ, ասաց.

— Համարձակ, համարձակ, աղաներ, ի՞նչ եք ամաչում,— և ապա դուրս գալով ավտոյից մեկ-մեկ գրկեց պիոներներին և սկսեց ուրախ զրուցել նրանց հետ: Պիոներները սիրտ առան և իրարից առաջ ընկնելով՝ հանձնեցին նվերները: Ամեն մեկն ուզում էր մի խոսք ասել ընկեր Որջոնիկիձեյին: Վերջում արդեն պատգամավորներից մեկը հայտնեց.

Ընկեր Որջոնիկիձե, չատ ենք խնդրում լազերի փակման հանդեսին մեզ մոտ գալ:

— Խոսք չեմ կարող տալ, բայց ամեն կերպ կաշխատեմ,— պատասխանեց ընկեր Որջոնիկիձեն:

Լազերի փակման որը մի նավակ կանգնեց նավահանգստում: Նավակում հինգ հատ մեծ արկղ կար, իսկ արկղների մեջ խմորեղեն և այլ նվերներ: Այս բոլորն ուղարկել էր ընկեր Որջոնիկիձեն:

Ընկեր Որջոնիկիձեն նամակով ներողություն էր խնդրել, վոր զբաղված լինելու պատճառով չի կարող ներկա գտնվել հանդեսին:



ԸՆԿԵՐ ԿԻՐՈՎԸ ՄԵՁ ՄՈՏ

Յերբ յես փոքրիկ եյի, մանկապարտեզ եյի հաճախում: Մի անգամ մեր դաստիարակչուհին ասաց.

— Հենց հիմա մեզ մոտ կգա ընկեր Կիրովը:

Յերեկոյան ժամի վեցին մանկապարտեզի զանգը փայլեց: Մենք յերկու կողմից շարվեցինք դռան մոտ, վերցրինք դրոշակներ և շունչներս պահած սպասում եյինք:

Դուռը բացվեց և ներս մտավ ընկեր Կիրովը: Նա կանաչ գլխարկ էր դրել, թեթև վերարկու և յերկարավիզ դեղին կոշիկներ էր հագել: Նա շատ ուրախ էր: Մենք ծափ տվինք, վերցրինք դրոշակները և սկսեցինք «Ինտերնացիոնալ» յերգել: Ընկեր Կիրովն էլ մեզ հետ յերգում էր:

Սկսեցինք քայլել: Ընկեր Կիրովն առաջ նայում էր, թե ինչպես ենք քայլում, ապա կանգնեց առաջին շարքում և սկսեց մեզ հետ քայլել: Քայլելուց հետո գնա-

ցինք սեղանատուն: Ընկեր Կիրովն էլ յեկավ: Մենք պտտվում եյինք նրա շուրջը:

Ահա մենք մտանք սեղանատուն, իսկ ընկեր Կիրովը նստելու տեղ չունի, մեր աթոռակի վրա չի կարող նստել: Այն ժամանակ մենք ընկեր Կիրովի համար յերեք մեծ աթոռ բերինք: Նա մեկի վրա նստեց, մյուսներն էլ մոտեցրեց իրեն և նրանց վրա նստեցրեց ամենավոքը յերեխաներին:

Սերգեյ Միրոնովիչը մեզ հետ կարկանդակ էր ուտում և հեքիաթներ պատմում: Յերկու հեքիաթ յես մինչև այժմ էլ հիշում եմ. մեկը նապաստակի մասին էր, վորի ականջներն ու պոչը կտրված եյին, իսկ յերկրորդը՝ ծուռվոտանի արջի մասին, վորը փեթակներնց մեղր էր դողանում:

Հետո խաղացինք «Սահմանապահներ» պիեսը: Ընկեր Կիրովը գլխավոր սահմանապահն էր, իսկ մենք՝ նրա ողնականները: Ընկեր Կիրովը յերկար ժամանակ խաղաց մեզ հետ, իսկ հետո սկսեց հրաժեշտ տալ և հերթով բոլորիս բռնեց և բարձրացրեց: Ինձ էլ բարձրացրեց, կամացուկ ցած դրեց և ձեռքս սեղմեց:

Մենք դրոշակները վերցրինք և ընկեր Կիրովի հետ փողոց դուրս յեկանք: Նա ավտոմոբիլ նստեց, ձեռքը թափահարեց ու գնաց:

44. ԾԱՂԻԿՆԵՐԸ

— Ո՞ւր գնացին ծաղիկները:
— Մո՛ւտ, քնած են հողի տակ,
Տաք ծածկված վողջ ձմեռը
Ձյուն ծածկոցով սպիտակ:

Կգա գարնան արևն էլ յետ
Իր շողերով կենդանի,
Ձմռան սաստիկ ցրտերի հետ
Ձյուն-ծածկոցը կտանի:

Յեւէ՛ք, կառի, ի՛մ մանուկնե՛ր.
 Յեւ չենց նրանք խմանան,
 Դուրս կհանեն գլխիկները,
 Աչիկները կբանան:

45. ՁՄՌԱՆ ԳԱԼԸ

Ձմռան գալն ամենից շուտ խմանում են թռչունները: Աչուներ գալուն պես, նրանց մեծ մասը խումբ-խումբ չվում է դեպի տաք յերկրներ: Կան թռչուններ ել, վոր չեն չվում. նրանք ձմեռը մնում են մեզ մոտ:

Աչնան վերջը նրանց փետուրներն ավելի յեն շատանում ու յերկարում:

Աչնան վերջը ծառերի տերեւները թափվում են: Նրանք մերկանում են ու կասես պատրաստվում են քնի, մինչև վոր գարնան արևը նորից նրանց զարթեցնի: Կեղեր վերարկվի նման պինդ փաթաթված է ծառին և չի թողնում, վոր ծառը մրսի ձմռան ցրտերից:

Աչնանը վայրենի կենդանիների մորթիները ծածկվում են խիտ ու յերկար մաղերով:

Նրանք իրենց համար չինում են տաք վորջեր: Վորջերում մեծ քանակությամբ ձմռան պաշար են հավաքում. որինակ՝ սկյուռը հավաքում է ընկույզ, կաղին, սունկ և գլեռ: Նա ամբողջ ձմեռը նստած իր տաք վորջում՝ ուրախ-ուրախ կրծում է պաշարը և սպասում գարնան գալուն: Բայց բոլոր վայրենի կենդանիները ձմռան պաշար չեն հավաքում: Կան զազաններ, ինչպես աղվեսը, գայլը, վորոնք ամբողջ ձմեռը սոված փորով դես ու դեն են թափառում մի բան ճանկելու, մի բան ուտելու, վոր սովից չմեռնեն:

ԱՌԱԾ. — Ձմեռվա վարդը կբան է:



ՁՄԵՌ



46. ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

Թոխ-վոխ
 Մի ճպուռ
 Վողջ ամառը
 Շուռ ու մուռ,
 Յերգեց, ճոռաց,
 Ճոճոաց:
 Մին ել, ըհը՝—
 Չմեռը
 Փռեց իրա
 Թևերը,
 Բացեց գորգն
 Սպիտակ,
 Դաշտերն առավ
 Ձյունի տակ:
 Անցան պայծառ
 Որերը.
 Ել վո՞րն ասեմ,
 Ել վո՞րը,
 Յերբ ամեն մի

Թփի տակ
 Թե՛ սեղան կար,
 Թե՛ ոթյակ:
 Յեկան որեր
 Յրտաշունչ,
 Ճպուռն ընկավ
 Լուռ ու մունջ.
 Քաղցած փորին
 Ել ի՞նչ յերգ—
 Յուրաք տարավ
 Վտան ու ձեռք:
 Չը՛նդր-ղը՛նդր
 Դողալով,
 Ծա՛նր-ծա՛նր
 Սողալով,
 Նա մըջյունին
 Ասում եր.
 — Գլխիդ մատաղ
 Սանամեր,
 Մի ճար արա՛
 Շունչ առնեմ,
 Յրախց, սովից
 Չմեռնեմ.
 Կերակրի,
 Տաքացուր,
 Մինչև գարուն
 Ապրեցուր:
 — Ի՞նչ խորար ե,
 Սանիկս,
 Չարմանում եմ,
 Չանիկս,
 Չաշխատեցի՞ր
 Ամառը,
 Ասա՛, ի՞նչ եր



46. ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

Թռիւնի
Մի ճպրուռ
Վողջ ամառը
Շուռ ու մուռ,
Յերգեց, ճոռաց,
Ճոճոաց:
Մին ել, ըհը՝—
Չմեռը
Փռեց իրա
Թռերը,
Բացեց գորգն
Սպիտակ,
Դաշտերն առավ
Չյունի տակ:
Անցան պայծառ
Որերը.
Ել վո՞րն ասեմ,
Ել վո՞րը,
Յերբ ամեն մի

Թռի տակ
Թե՛ սեղան կար,
Թե՛ ոթյակ:
Յեկան որեր
Յրտաշունչ,
Ճպրուն ընկավ
Լուռ ու մունջ.
Բաղցած փորին
Ել ի՞նչ յերգ—
Յուրաք տարավ
Վասն ու ձեռք:
Չը՛նգր-ըը՛նգր
Դողալով,
Ծա՛նր-ծա՛նր
Սողալով,
Նա մըջյունին
Ասում եր.
— Գլխիդ մատաղ
Սանամեր,
Մի ճար արա՛,
Շունչ առնեմ,
Յրախց, սովից
Չմեռնեմ.
Կերակրի,
Տաքացուր,
Մինչև դարուն
Ապրեցուր:
— Ի՞նչ խաբար ե,
Սանիկս,
Չարմանում եմ,
Չանիկս,
Չաշխատեցի՞ր
Ամառը,
Ասա՛, ի՞նչ եր.

Պատճառը:
 — Եղալես բանի,
 Սանամեր,
 Եւ ժամանակ
 Ո՞վ ուներ.
 Են խոտերում
 Բուրավետ
 Յերգում եյինք
 Մերոնց հետ...
 — Ուրեմն դո՞ւ...
 — Այո՛, յես
 Վողջ ամառը
 Դեն ու դես,
 Յերգում եյի
 Մշտապես:
 — Յերգո՞ւմ եյիր...
 Շա՛տ բարի:
 Այժմ ել բռնի
 Վերվերի,
 Քամին ծափ տա՛
 Դու պարի:

47. ԳԻՇԵՐՆ ԱՆՏԱՌՈՒՄ

1

Չորս սայլորդ եյինք, վարձով ապրանք եյինք տա-
 րել քաղաք, այնտեղից վերադառնում եյինք: Հունվար
 ամիսն եր: Անտառումն եյինք. մթնեց. պետք է գիշե-
 րեյինք: Գրիգոր քեռին, վոր ամենիցս մեծն եր և մեր
 գլխավորը, մի հարմար բացատ ընտրեց:

Յեզներն արձակեցինք, ծառի ճյուղերից մի մեծ
 մսուր չինեցինք և յեզներին խոտ ու դարման տվինք:

Յերկու հոգով սկսեցինք չոր ճյուղեր կտրտել ու փայտ
 հավաքել, իսկ մյուս յերկուսը յերկար ձողերով սայլե-
 րի մոտի ճյուղն մաքրեցին: Յերկու տեղ կրակ վառե-
 ցինք, մեկը յեզների այս կողմը, մյուսը՝ այն կողմը,
 վոր յեզները չմրսեն:

Գրիգոր քեռին հանեց պաշարը. լավ կերանք, մո-
 տիկ աղբյուրից ել կուշտ ջուր խմեցինք, կրկին փայտ
 ավելացրինք և մեր յափնջիներում փաթաթված՝ կրակի
 առաջ պառկեցինք:

2

Շատ ժամանակ եր անցել թե քիչ, չգիտեմ, մեկ ել
 Մելքոն ապերը գոռաց.

— Վեր կացեք, ա՛յ տնաքանդներ, դայլերը յեկան,
 Բ՞նչ պիտի անենք:


Հեռվից լսվում եր դայլերի վոռնոցը. մեկը վոր
 սկսում եր, մյուսները շարունակում եյին. նրանց աչ-
 քերը մթնում պսպղին եյին տալիս: Յեզները թողել
 եյին իրենց խոտը և մեջքներն իրար արած, գլուխնե-
 րը կախած, անհանգիստ աչքերով դիտում եյին շուր-
 ջը և փնջացնում:

— Կրակը, կրակը մեծացրեք, թեթացրեք, — ձայն
 տվեց Գրիգոր քեռին արթնանալով: Նա իսկույն հաս-
 կացավ, թե ինչ է կատարվում:

Յերկու կրակի վրա ել փայտ լցրինք. կայծերը
 յերկինք բարձրացան: Գայլերը մոտեցել, չըջապատել
 եյին մեզ. կրակի բոցով շատ լավ տեսնում եյինք նը-
 րանց բաց բերանները և փայլուն աչքերը. սարսափով
 լսում եյինք և նրանց ատամների չխկչխկոցը:

— Վա՛, Գրիգոր ջան, կորած ենք, Բ՞նչ պիտի ա-
 նենք, — ասում եր վախկոտ Մելքոն ապերը:

— Մի վախենաք, վոչինչ չի լինի, — մտի հոտ են
 առել, անիրավներ... այ, մի հրացան լինեք հա՛...
 ասում եր քեռին հանգիստ ա վստահ:



3

Թե ինչքան ժամանակ տեւեց ես սարսափել, չեմ կարող տեսել... գայլերի ողակը հետզհետե նեղանում եր... ու այնքան ել չա՛տ եյին... յես յերեսուն տեւեմ, դուք քառասուն իմացեք:

Յերբ գայլերն այնքան մոտեցել եյին, վոր կարելի չէր փայտը չարտելով հասցնել նրանց, քեռին հրամայեց, վոր վառվող ածխակոթերը չարտենք գայլերի վրա:

«Դե չուտ» վոր տեսց, բոլորս ել վառվող փայտերը չարտեցինք գայլերի վրա: Նրանց մեջ իսկույն իրարանցում ընկավ ու հետ-հետ գնացին: Այդ միջոցին քեռին վերցրեց մի ահագին ածխակոթ և ուղղակի հարձակվեց ամենամոտ գայլի վրա: Սա սոսկալի վռոնացով սկսե՞ փախչել, մյուսները հետեւեցին նրան:

Հինգ բոպեյից հետո գայլերի վռոնացը շատ հեռ-վից եր գալիս:

— Ել չեն դա, անհանգիստ մի լինեք, — առաջ քեռին, — տեսե՛ք յեղներն ինչպես ուղղվեցին, հանգրտացան ու սկսեցին խոտ ուտել...

Իսկապես սպասեցինք տասը-տասնհինգ բոպե, և գայլերը չվերադարձան:

— Շատ ուրիշն ես, հա՛, Գրիգոր, — առաջ Մեղքոն ապերն ուրախ ժպտում:

Իսկ Գրիգոր քեռին փաթաթվել եր իր չափնջու մեջ և արդեն քնել եր:



ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

(Մանկական գրող)

48. ՊԱՌԱՎԻ ՀՈՐԹԸ

Ձյուն եր գալիս փաթիլ-փաթիլ,
Հետն ել անձրև կաթիլ-կաթիլ.
Այդ միջոցին մի պառավ կին
Հորթն եր փնտռում դաշտի միջին:

Կովը յեկավ տավարիցը,
Կուրծքը քաղցր կաթով լեբը:

«Հորթուկն ո՛ւր ե», նա բառաչեց,
Խեղճ պառավին լացացրեց:

Մինչդեռ այսպես պառավ ու կով
Վողբում էյին լաց ու կոծով,
Հանկարծ լավեց մի բարակ ձայն,
Կովն իմացավ, վոր հորթն է այն:

Կովը վազեց բառաչելով,
Պառավն յետքից արնքտընքալով,
Կորած հորթը մորը գտավ,
Լիքը կուրծքը բերանն առավ:

Ծծեց բոլոր կաթն ու տկզեց,
Տանտիկնոջը բան չթողեց.
Բայց պառավը այս անգամին
Սիրով ներեց չար հորթուկին:

49. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԵՃԸ

Ապրում էյին մի բակում կատուն ու աքլորը, չունն
ու այծը: Յերեկոները մեկ-մեկ նրանք հավաքվում էյին
ու զրույց անում իրենց գործերի մասին: Մի բանում
միայն նրանք չէյին համաձայնում—ի՞նչն է աշխարհիս
յերեսին ամենից լավը:

— Կաթից լավ բա՛ն, — ասում էր մլավան կա-
տուն: — Մուկն ել լավ է, բայց բռնելը մի քիչ գլխա-
ցավանք է:

— Եհ, գու էլ բան ասացիր. կաթն ի՞նչն է վոր-
ա՛յ, ուրիշ բան է կորեկը կամ գարին, — վիճում էր փե-
տոյի հետ աքլորը:

— Դատարկ բաներ եք ասում, յեղբայրնե՛ր, — ընդ-
հատում էր նրանց Բողարը. վոսկո՛ր, այ ինչ եմ ասել,

Վոսկորին վոչինչ չի հասնիլ: Վոսկորի համը յես լավ
գիտեմ. դուք ինձ հավատացեք...

Այժը լսում էր, լսում ու միրուքը ամբամբայնե-
լով խոսում:

— Դուք վոչ մեկդ ձեր բերանի համը չգիտեք: Փա-
փուկ ու թարմ խոտը վոչնչի հետ չեմ խափիլ, մանա-
վանդ յեթե բուրավետ է:

Վիճում են ու վիճում. իսկ թե ինչն է ամենից
լավը, դեռ ես չեմ վորոշել:

50. ՍԱՀՆԱԿԸ

Բլրակի լանջին ձյունը սառել էր, սպաղում, պեծ-
պեծին էր տալիս:

— Տղե՛րք, գնանք սահելու, — ասաց Գևորգն իր
ընկերներին:

— Գնանք, գնանք, — ասացին մյուսները և սահ-
նակներն առած՝ գնացին:

Վահանն ու Սինոն ել գնացին, թեև սահնակ չունե-
յին:

Որը պարզ էր ու ցուրտ: Արեգակը բոլորովին չէր
տաքացնում յերեսանների սառած ձեռքերը. նրանք կա-
տակներ էյին անում, վազվզում, վոր չմրսե՛ն:

Կարգով կանգնում էյին բլրակի գլխին: Սահնակ-
ներին նստած՝ սահնակներն իրար հետեվից բաց էյին
թողնում, սահելով իջնում էյին մինչև ստորոտը և նո-
րից բարձրանում:

Սահնակ չունեցողները ծաղրում կամ քաջալերում
էյին սահողներին:

— Սինո՛, Վահա՛ն, յես հոգնեցի, յեկեք դո՛ւք սա-
հեցեք, — ասաց Կոստին:

— Առաջ դո՛ւ սահի, Սինո:

— Ձե, դո՛ւ սահի, Վահա՛ն:

Վերջապես Սինոն սկսեց սահել:



Յերբ յերկրորդ անգամ սկսեց սահել, հենց սկզբից սահնակը պտտվեց և արագ թափով իջավ: Սինոն ճշում էր, ողնության եր կանչում: Ի՞նչ անեյին. յեթե մոտենային, պիտի ընկնեյին: Բոլորն ել կողքից վազում, վա՛յ, վա՛յ, եյին կանչում:

— Վա՛յ, Սինո ջան, — լաց եր լինում Վահանը և մոտից վազում:

Սահնակը տատանվում էր, պետք է շուռ դար և խեղճ Սինոյին տակովն աներ ու ձորը գցեր: Մեկ ել են տեսան, վոր Վահանն ամբողջ մարմնով մեկինվեց ճանապարհի վրա, սահնակի առջևից:

Բոլորը զարմացած ճիչ արձակեցին: Սահնակը դեմ առավ Վահանին ու կանգ առավ: Յերբ ընկերները բարձրացրին Վահանին, նրա գեմքն ամբողջովին արյունոտված էր:

Սինոն փրկված էր: Յնծությունն ընդհանուր էր: Բոլորը հավաքվել եյին Վահանի շուրջը և աշխատում եյին ձյունով կտրել նրա քթի արյունը:



51. ԲՈՒՐԸ

1

Շատ է պատահում, վոր հրդեհ ընկած տանը յերեխաներ են մնում: Նրանց ազատել հնարավոր չի լինում, վորովհետև նրանք վախից թաղնվում են ու լքում, ծուխն ել չի թողնում, վոր յերևան: Յերեխաներին ազատելու համար սովորեցրած չներ կան:

Այս շներին պահում են հրչեջները, և յերբ մի տուն հրդեհ է ընկնում, նրանք այդ շներին ուղարկում են՝ մանուկներին ազատելու:

Այդպիսի մի շուն կար, վորը տասներկու յերեխա յեր ազատել: Այդ շան անունը Բոր էր:

2

Մի անգամ մի տուն եր վառվում: Յերբ հրդեհաչեջներն յեկան, մի կին վազեց նրանց մոտ և լաց լինելով ասաց, վոր իր յերկու տարեկան աղջիկը մնացել

ե տանը: Հրդեհաշեջները ներս ուղարկեցին Բորին: Բորը վազեց ու չքացավ բոցի մեջ: Հինգ րոպեյից հետո նա, ատամներով աղջկա շապիկից բռնած, դուրս թռավ տանից: Մայրը գրկեց աղջկանը և ուրախությունից լաց յեղավ: Աղջիկը կենդանի յեր: Հրդեհաշեջները փաղաքշում էին շանը և նայում, վոր տեսնեն՝ հո չի՞ մնասկել:

Բայց Բորն ուզում եր նորից ներս վազել: Հրդեհաշեջները կարծում էին, թե ներսն ելի մեկը կա և բաց թողին շանը: Բորը ներս վազեց և շուտով դուրս յեկավ մի ինչ-վոր բան ատամներով բռնած: Յերբ մարդիկ մոտ վազեցին ու տեսան, թե ինչ է բերել նա, ծիծաղից թուլացան:

Շան բերանին մի մեծ տիկնիկ եր:

52. ՁՄՆՈՒ

Ծառը մերկացավ,
Ձրկվեց տերևից.
Ձյունի փաթիլներ
Իջան ամպերից:

Ձյուն ու ցուրտ յեկավ,
Առու, գետ լռեց.
Իր սպիտակ գորգը
Ձմեռը փռեց:

Ձյունը ծնկահար
Նստեց մեծ ճամփին,
Սպիտակ հյուսերը
Կիտեց զետափին:

Ծառեր ու թփեր
Ձմեռն արծաթեց,
Սար ու ձոր ընկավ,
Կալեց ու կապեց:

53. ՅԵՐԿՈՒ ԱՂՎԵՍ

Մի անգամ յերկու աղվես ընկերացան:
Մի որ աղվեսներից մեկն ասաց մյուսին.

— Յեղբայր, դու քանի՞ հնարագիտություն գիտես:

Ընկերը պատասխանեց.

— Յես գիտեմ քառասունը. իսկ դո՞ւ քանիսը գիտես:

— Յես ել յերկուսը գիտեմ:

Այդ ժամանակ քառասուն հնարագիտություն իմացողն ասաց.

— Վոր աղվես ե, դու ինձ ընկեր չես կարող լինել:

— Ինչո՞ւ չեմ կարող, — զարմացած հարցրեց առաջին աղվեսը:

Յերկրորդ աղվեսը պատասխանեց.

— Շատ պարզ է, դու միայն յերկու հնարագիտություն գիտես, իսկ յես՝ քառասունը:

Այդ որվանից աղվեսներն իրարից բաժանվեցին. բայց յեկավ մի որ, վոր աղվեսները նորից իրար հանդիպեցին: Այս անգամ քառասուն հնարագիտությունների տեր աղվեսը գտնվում եր թակարդում:

Յերկու հնարագիտությունների տեր աղվեսը նկատելով նրան՝ ասաց.

— Յեղբայր, այս ի՞նչ եմ տեսնում, եդ ի՞նչ որն ես ընկել:

Այդ ժամանակ աղվեսը թակարդից պատասխանեց.

— Ել ի՞նչ հարցնելու ժամանակ ես գտել. կորած եմ, հնար ունես, տես:

Առաջին աղվեսը մի քիչ մտածելուց հետո ասաց.

— Յեղբայր, մի' մտածիր, հնարը դուստ:

Այն մենք ստուկած ձեռնանք, դու աշխատեղ քո թա-
կարդի մեջ փովիր, իսկ յես ել քեզանից մի քիչ հեռու:
Յես պիտեմ, քիչ հեռու վորսորդը պիտի գա և քեզ
թակարդից հանի. հետո նա պիտի հետ դառնա այն
ճանապարհով, վորի վրա յես եմ լինելու պատկած: Հենց
վոր ինձ տեսնի, շատ կուրախանա, քեզ կղնի ցած և
կխաղի դեպի ինձ, վոր վերցնի:

Այն ժամանակ դու քո տեղից կփախչես, յես ել իմ
տեղից և այսպիսով կազատվենք վորսորդի ձեռքից:

— Կեցցես, — ասաց քառասուն հնարագիտություն
իմացողը, լավ հնար ե, աշխատեալ ել կանենք: Յերանի՛
յես ել քեզ նման յերկու լավ հնարագիտություն իմա-
նայի, քան թե այսպիսի քառասունը, վորոնք ինձ այս
որին հասցրին:

54. ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՎԵՑ ԲՈՒԼԿԻ

(Դուրովի գազանաճոցում)

1


Բերին շատ եր սիրում, յերբ իրեն սպասարկող Նի-
կոլայր Բերիի մարմինը չփում եր վազելինով: Վազե-
լինը Բերիի մարմինը պահպանում եր ցրտահար լի-
նելուց:

Պատահում եր, վոր չփման ժամանակ Բերին չա-
րություններ եր անում, կամ գլուխն եր շարժում, կամ
կնճիթով հրում եր շուրջը շտանված իրերը — աթոռներ,
դուլյեր և կարծես ինքն ել եր հասկանում, վոր չարու-
թյուն ե անում:

Բերին չարություն եր անում նաև լողանալու ժա-
մանակ, իսկ լողանալ նա շատ եր սիրում:

Ղրիմում հանգստացողները ժամերով նայում եյին,
ինչպես Բերին ծովում լողանում եր. լարախաղացի նը-
ման նա գլուխկոնձի յեր տալիս ալիքների մեջ: Բերին
ծովի հատակից կնճիթով ավազ եր հանում, ծեփում
գլուխը և ուները, կամ կնճիթով հարվածում ալիքնե-
րին: Մի լավ խաղալուց հետո՝ նա դանդաղ սուզվում
եր ջրի տակը, դուրսը թողնելով միայն իր կարճիկ
պոչը: Ամբոխը հռհռում եր:

Բերին շատ եր սիրում մարդկանցից բան խնդրել.
յես նրան շատ լավ եյի կերակրում, բայց նա ելի սի-



րում եր հասարակությունից նվերներ համաքել: Մար-
դիկ նրան սիրում եյին և առատ հյուրասիրում: Մանա-
վանդ յերեխաները — նրանք անընդհատ Բերիի ճկուն
կնճիթի մեջ եյին դնում զանազան քաղցրեղեններ:

Մեկ ել տեսար՝ Բերին դուրս յեկավ հրապարակ
սկսեց գլուխ տալ. չորս կողմից նրան քաղցրեղեն են
նետում: Իսկ մուրացիկ Բերին գլուխ ե տալիս և կլա-
նում շաքարաղենը, ընկույզը և բուլիկները:

Մեկ անգամ յես վորոշեցի հաշվել՝ քանի բուլիկ

յեն նախընտրեալ: Պարզեց, վոր մի իրիկուն հյու-
րասեր հանգիստատեսները հարյուր քսանվեց մեծ, լա-
պիտակ բուլկի յեն տվել Բերին և այդ բոլորը նա կե-
րել էր:

2

Մի անգամ կայարանում Բերին չըջապատել էյին
մթերավաճառ կանայք: Բերին նկատեց մի դամբյուղ
լիքը կաղամբով, գետնախնձորով ու գաղարով: Զամ-
բյուղը պատկանում էր տասնմեկ տարեկան մի աղջկա,
վորն ամեն ինչ մոռացած՝ դիտում էր անծանոթ հսկա
կենդանուն:

Առանց յերկար ու բարակ մտածելու՝ Բերին յեր-
կարացրեց կնճիթը և ամբողջ դամբյուղը—կաղամբի,
գետնախնձորի ու գաղարի հետ միասին—տարավ բե-
րանը:

Աղջիկը դարձանքից սառեց:

Նա լուռ հետևում էր, թե ինչպես այս հսկա կեն-
դանին կուլ է տալիս իր դամբյուղը:

Բերին հաճույքով կերավ և ըստ սովորության ըս-
կեց գլուխ տալ: Աղջիկն իրեն կորցրեց, աչքերը թար-
թեց և նույնպես սկսեց գլուխ տալ: Ամբողջ հոգաց:
Ճիշտն ասած՝ նույնիսկ կրկեսում Բերին այսպիսի
հաջող համար չէր ունեցել: Ծիծաղն սթափեցրեց
աղջկանը. նա նայեց շուրջն ու լաց յեղավ: Ստիպված
էյի վճարել թե՛ դամբյուղի և թե՛ բանջարեղենի ար-
ժեքը:


3

Յերբեմն Բերին մանր գողություն ել էր ա-
նում: Նա խտրություն չէր դնում— վերցնում էր՝ ինչ
պատահում էր:

Նկատում էր իրեն սպասարկողի բաճկոնը, Բերին
խլում էր այդ և գրպաններով միասին, վորտեղ գտնե-
լում էր ծխախոտը, քսակը, գրչահատը և նույնիսկ
անցագիրը,— այս բոլորը կուլ էր տալիս:

Դերասանական սենյակները կողքով անցնելիս, նա
հարմար առիթը չէր կորցնում ու թոցնում էր նրանց
պարիկները, գլխի շերտերն ու զգեստները: Այս բոլո-
րը նա պահում էր միևնույն տեղում — բերանում:

Մեկ անգամ նա փորձեց կուլ տալ նույնիսկ վառ-
վող նավթի լամպը:



55. ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Ժամանակով կատուն ճոն էր,
Շունն ել գլխին գդակ չունեւ,
Միայն, գիտեմ վոչ՝ վորդիանց վորդի
ձանկել էր մի գառան մորթի:
Յեկավ մի ուր, ձմեռնամառին,
Կատվի կուշար տարավ մորթին:

— Բարի աջողում, ուստա փխտ,
Գլուխս մըսեց, ի սեր ասածո,
Առ ես մորթին ու ինձ համար


Մի գղտիկ կարի գլխիս հարմար:
Վարձիդ համար միամիտ մնա,
Համա, համա շատ չուշանա:

— Աչքիս վրա, քեռի Գուշի,
Մի գղտիկ ե, հո մի քուրք չի.
Գու թանդագին խաթեր համար
Ուրբաթ որը համեցեք տար:
Փողի մասին ավելորդ ե,
Մեր մեջ խոսելն ել ամոթ ե.
Ի՞նչ մեծ բան ե, տո հեր որհնած,
Միա՛յն, միա՛յն մի գղտիկ վարձ:

Ուրբաթ որը քեռի Գուշին՝
Ուստից առաջ՝ բաց-բաց կուճին
Թափ-թափ տալով՝ ծանր ու մեծ,
Ուստա կատվի շեմքում կանգնեց:
— Ուստեն ո՞ւր ա... փափախա ո՞ւր ա...
— Մի քիչ կացի, հրես կերևա:

Ուստեն յեկավ քուրքը հագին,
Շանը տեսավ, բեղի տակին
Իրեն-իրեն քիչ փնթփնթաց,
Ու մուշտարու վրա թնդաց
— Յուրտը տարա՞վ... վա՛հ, տնաչեն,
Ձեռ թողնում, վոր մի շունչ քաշեմ.
Հեշտ բան հո չի՞, հլա նոր եմ
Յրցամ տվել, թե վոր կարեմ:

— Դե՛, հեր որհնած, եղպես ասա,
Եդ բարկանալդ ել ինչի՞ն ա:
Փող եմ տվել, շուտով կարի,
Թե չե՛ ասա եղբուց արի:
Համ ասում ես, համ չես կարում,
Համ խոսում ես, վրես գոռում,



Հա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ,
Քանի՞, ախպեր, գնամ ու դամ...
Ասավ Գուշին ու նեղացած
Վերադարձավ գլուխը բաց:

Մին ել յեկավ, դա՞ջալ չկար.
Ես անգամը դիպան իրար.
Ել անպատիվ, անկարգ խոսքեր,
Ել հին ու նոր, ել հերն ու մեր,
Ել գող Փիսո, ել քաջալ Շուն...
Բանը հասավ դիմանբաշուն:
Շունը մինչև գնաց, յեկավ,
Ուստա կատուն կտորն ընկավ,
Գլուխն առավ ու մի գիշեր
Հայդե կորավ, են կորչին եր...

Են որվանից մինչև որս ել
Շունն ես բանը չի մոռացել,
Մտքում հլա դեռ պահում ե.
Վորտեղ կատվին պատահում ե,

Վեր ե թռչում, վրա վազում,
իրեն մորթին յետ ե ուզում.
Իսկ սևերես կառուն հանկարծ
Յետ ե դառնում ու բարկացած
Փշտացնում ե. մթամ նոր եմ
ճրջամ տվել, թե վոր կարեմ:



56. ԵՍԿԻՄՈՍ ԼՈԿ-ՏՈՆ

Փոքրիկ Եսկիմոս Լոկ-Տոն միայն վեց տարեկան ե.
բայց կարծես թե իսկական չափահաս ե: Նա մի շուն
ունի, վորի անունը Բայ ե և շատ նման ե գայլի: Լոկ-
Տոն ինքն ե կերակրում շանը:

Լոկ-Տոն ապրում ե հեռո՛ւ հյուսիսում, ծովի ա-
փին: Չմեռը ցուրտ ե ու յերկար: Չորս ամիս շարունակ
դիչեր ե լինում: Նրանք մտնում են իրենց սառցե տնակ-
ները և սպասում ամռան:

Ամառը շատ կարճ ե անվում: Նորից գալիս ե յեր-
կարատե ձմեռը:

Նրանց յերկրում ծառեր չեն բուսում:
Լոկ-Տոն ցրաից չի վախենում: Մորթե շորեր ե
հագնում, գլխին տաք գլխարկ ե դնում:
Յերբ հայրիկը ձուկ կամ ծովահորթ ե բռնում,
Լոկ-Տոն շատ ե ուրախանում: Ինքն ել հայրիկի ու ըն-
կերների հետ յերբեմն ձկնորսության ե դնում:

57. ՏԱՔ ՅԵՐԿՐՆԵՐ

Կան յերկրներ, վորոնց բնակիչները չգիտեն՝ ինչ
ե ցուրտն ու ձյունը. այնտեղ շոգ ե թե ամառը, թե
ձմեռը: Արեվն այնպես ե այրում, վոր գետնի վրա
վոտք դնել անկարելի յե: Իսկ յերբ անձրևներ են գա-
լիս, հեղեղներ են առաջանում:

Այգլիսի տեղերում բուսականությունը չափազանց
առատ ե. ծառերի բարձրությունը յերբեմն 60-80 մետ-
րի յե հասնում, իսկ տերևների յերկարությունը՝ 6-7
մետրի:

Խիտ անտառները լի յեն հսկայական մեծության
կենդանիներով, ահռելի միջատներով, չքնաղ թռչուն-
ներով:

Ահա ճարպիկ ու չարածճի կապիկները, վորոնք
ծառից ծառ են ցատկում...

Ահա վիթխարի ոճերը, վորոնք կուլ են տալիս պա-
տահած փոքրիկ կենդանուն ու թռչունին:

Դիչեր ե. յեղեգնուտի մեջ թաղնված վաղբը վոր-
սի յե դուրս գալիս: Կառվի նման ձգվելով՝ նա ցատ-
կում ե ու կախվում պախրայի վզից:

Անտառի ծառերը կոտրատելով ճանապարհ ե բաց
անում լեռնաջափ փիղը...

Բայց ամենից ճարպիկն ու ղեղեցիկը, ամենից ու-
ժեղը— առյուծն ե: Յերբ նա մոնչում ե, սարսափում
են բոլոր կենդանիները, թնդում ե անապատը:

Վա՛յ նրան, ով ժամանակին չի նկատի վորսի
գուրս յեկած առյուծին...



58. ԻԳՈՐ ՉԿԱԼՈՎԻ ՀՆՈՒԱԳԻՐՆ ԻՐ ՀԵՐՈՍ ՀՈՐԸ՝
Յալտա, 21 հունիսի

Քարտեզի մոտ կանգնած է Իգոր Չկալովը. նա հը-
պարտությամբ ցույց է տալիս իր հոր թոխքի ուղին
Արտեկի բարեկամներին՝ Վալյա Մուրովին և Վովա
Վոդոպյանովին:

Իգորն իր հորն ուղարկեց հետևյալ հեռագիրը.

«Հյուսիսային Ամերիկա: Վաշինգտոն, Պորտլանդ
քաղաք: Խորհրդային Միության հերոս Չկալովին:

Սիրելի՛ հայրիկ, շնորհավորում եմ քեզ Մոսկվա-
Հյուսիսային Ամերիկա հաջող թռիչքի համար:

Արտեկի ճամբարի պիոներներից և հոկտեմբերիկ-
ներից հաղորդում եմ քեզ՝ փողջույն քեզ, ընկեր Բայ-
դուկովին և ընկեր Բելյակովին:

Հունիսի 30-ին լրանում է Արտեկի 12 տարին:

Մենք պետք է կազմակերպենք պիոներական մեծ
խարույկ: Մենք, բոլոր պիոներներս և հոկտեմբերիկե-
րըս, խնդրում ենք քեզ, Բայդուկովին, Բելյակովին և
մայրիկին՝ թռչել մեզ մոտ, հոբելենական խարույ-
կին մասնակցելու համար:

ԳՈ ՎՈՐԴԻ ԻԳՈՐ՝



Մանուկները մեծ բարեկամ
ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

59. Մ. ԳՈՐԿՈՒ ՆԱՄԱԿԸ ՅԵՐԵՆԱՆԵՐԻՆ

Վոլջույն Ջեֆիրին, Լիզային, Վիայային, Դիմա-
յին, Լենային, Մերին, Մեմեյին, Շուրային, Իրինա-
յին, Պավլին, Նորային, Ֆեդային, Բորյային, Գուն-
աին:

Շնորհավորում եմ ձեր լավ տոնը, ցանկանում եմ
ձեզ՝ թուլանալու աստիճան ուրախանալ: Յես ցան-
կանում եմ, Վոր դուք ինձ հիշեք և ահա մտածեցի ու-
ղարկել աղջիկներին չրջանակներ, իսկ աղաներին՝
փայտյա տուփեր — այստեղի դուղացիների աշխա-
տանքը:

Ձեր նամակն ստանալով՝ յես ուրախությունից ծի-
ծաղեցի այնպես, Վոր բոլոր ձկները դուրս հանեցին
Քթերը ջրից — թե ինչ է պատահել: Յես բացատրեցի

նրանց, վոր մյուս ծովի ափին ապրում են շատ լավ
մարդիկ. նրանք դեռ փոքր են, բայց յես հավատա-
ցած եմ, վոր յերբ մեծանան, ավելի լավը կլինեն, ահա
թե ինչու յեմ յես ուրախ:

Ի՛նչպիսի մեծ ուրախությամբ կտեսնվեյի ձեզ հետ,
ի՛նչպես լավ կխաղայինք մենք, և ի՛նչքան զվարճալի
բաներ կարող եյի պատմել ձեզ: Յես այնքան ել յերկտա-
սարդ չեմ, բայց տխուր մարդ ել չեմ և կարող եմ շատ
լավ ցույց տալ, թե ինչ ե պատահում ինքնայեռի հետ,
յերբ նրա մեջ կրակ են լցրել և մոռացել են ջուր լցնել:
Յես շատ եմ սիրում խաղալ յերեխաների հետ: Այդ
իմ հին սովորութիւնն ե. տասը տարեկան հասակում
յես իմ փոքրիկ յեղբոր դայակն եյի: Յերբ նա մեռավ,
յես իմ մյուս յեղբայրների դայակը դարձա և վերջը,
յերբ քսան տարեկան եյի, ամեներին հավաքում եյի բո-
լոր փողոցներից յերեխաներին և նրանց հետ գնում եյի
անտառ ամբողջ որով, առավոտից մինչև յերեկո: Այդ
շատ լավ եր, գիտե՞ք: Հավաքում եյի մոտ վաթսուն
յերեխա, նրանք փոքրիկ եյին՝ չորս տարեկանից սկսած
և տասը տարեկանից վոչ մեծ: Վազվզելով անտառում,
նրանք հաճախ չեյին կարողանում վտարով տուն գալ:
Իայց դրա համար ինձ մոտ լինում եր հատուկ բազկա-
թուռ. յես կապում եյի այն իմ մեջքին, այդ բազկաթո-
ռի և ուսերիս վրա նստեցնում եյի հոգնածներին և
այդպիսով նրանց տուն եյի հասցնում: Հրաշալի յեր:

Իրինան խնդրել եր, վոր յես յերեխաների համար
պիեսա գրեմ: Յես փորձեցի, դուրս յեկավ, վոր չեմ
կարողանում: Յես կշանամ ձեզ համար հեքիաթ գրել, —
յեղա՞վ:

Ձեր՝ Մ. ԳՈՐԿԻ




60. ՏՈՆԱԾԱՌԻ ՅԵՐԳԸ

Հագած կանաչ, փշոտ գլխարկ
կանաչ շորեր շողշողուն,
Յես մի ծառ եմ՝ մեջքս բարակ,
Վրաս դարդեր պսպղուն:

Իմ ուսերին ինչ սիրունիկ
Խաղալիքներ կան պես-պես.
Փայլուն աստղեր, ձի ու ձկնիկ
Յեւ տիկնիկներ վարդերես:

Դուրսը ձմեռ ու խորը ձյուն,
Սառնամանիք հաճելի.
Իսկ իմ շուրջը խաղ-խնդություն
Յեւ մանուկներ սիրելի:

Ձիւ հնչում են յերգ ու ծիծաղ,
Ամեն մանուկ՝ մի ծաղիկ,
Լավ ե ապրել, լինել ուրախ
Մեր մեծ յերկրում յերջանիկ:



61. ԻՆՉՊԵՍ ԵՐ ՍՈՎՈՐՈՒՄ ՎԱԼՈՂՅԱՆ

Վալոդյան (Լենինը) դպրոց ընդունվեց ինն և կես տարեկան: Նա շատ լավ եր սովորում:

Դպրոցում յերեխաներն իսկույն սիրեցին Վալոդյանին, վորովհետև նա լավ ընկեր եր:

Վալոդյան ողնում եր, վոր ընկերները լավ պատրաստեն իրենց դասերը. բացատրում եր այն, ինչ վոր չէին հասկանում: Հենց դրա համար ել Վալոդյան առավոտները վաղ եր արթնանում և դասերն սկսվելուց կես ժամ առաջ եր դպրոց գալիս:

Մի անգամ Վալոդյան դպրոց ե գալիս ու տեսնում, վոր ընկերները միճում են ինչ վոր հարցի մասին: Նրանք հենց վոր տեսնում են Վալոդյանին, դիմում են նրան.

— Մենք քեզ ենք սպասում և ուզում ենք հարցնել, թե ինչպես ե գրվում Իվանով ազգանունը, մեծատառով, թե՞ փոքրատառով: Կոլյան և Շուրան առում են՝ մեծատառով, իսկ Ալիմն առում ե, թե փոքրատառով պետք ե գրել:

Վալոդյան բացատրում ե, վոր անունները պետք ե գրել մեծատառով. Իվանով ազգանուն ե, դրա համար ել պետք ե գրել մեծատառով:

Վալոդյան լավ եր վերաբերվում իր բոլոր ընկերներին, ողնում եր նրանց, բացատրում անհասկանալի բաները, ուղղում նրանց թարգմանություններն ու չարադրությունները:

Ձմեռային և ամառային արձակուրդներին Վալոդյան կամ կարգում եր, կամ վաղվում, գրոսնում. ձմեռը չմուչկ եր խաղում, ամառը՝ այլ խաղեր, կամ լողանում եր գետում:

62. ՎԱԼՈՂՅԱՆ ՍԻՐՈՒՄ ԵՐ ԹՈՋՈՒՆՆԵՐԻՆ (Վ. Ի. ԼԵՆԻՆԻ մանկությունից)

Փոքրիկ Վալոդյան սիրում եր թռչուններ վորսար: Ընկերների հետ թափարդներ եր գնում, իսկ ավելի վաղ հասակում սիրում եր թռչուններ գնել և բաց թողնել նրանց ազատ ողում թռչելու: Հիշում եմ, մի անգամ

Նա կարմրալանջ մի թռչուն ուներ վանդակում: Չգիտեմ, ի՞նքն եր բռնել, փողո՞ւմ եր առել, թե՞ վորևէ մեկը նվիրել եր նրան. հիշում եմ միայն, վոր թռչունը շատ չապրեց, տխրեց, թռչնեց ու սատկեց: Չգիտեմ, թե ի՞նչից աղւալես յեղավ. մեղավո՞ր եր արդյոք Վալդյան, վոր մոռանում եր թռչունին ժամանակին կերակրել, թե վոչ: Հիշում եմ միայն, վոր մեկը նախատում եր նրան աղբ բռնում, և հիշում եմ Վալդյայի լուրջ, կենտրոնացած հայացքը, վորով նա նայում եր սատկած թռչունին և ասա ասաց վճռական. «Այլևս յերբեք վանդակում թռչուն չեմ պահի»:

Յեւ իսկապես, այլևս նա վանդակում թռչուն չեր պահում:

63. ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉԻ ՀԵՏ ՍԱՆԱՏՈՐԻԱՅՈՒՄ

Մի անգամ հայրիկս սանատորիա դնաց Վլադիմիր Իլյիչի հետ տեսակցելու. ինձ ու յեղբորս ել հետը տարավ: Յերբ տեղ հասանք, յես ու յեղբայրս սկսեցինք սոյզում խաղալ, իսկ հայրիկս խոսում եր Իլյիչի հետ:

Հետո մեր խաղին միացավ Վլադիմիր Իլյիչը. մենք խփում եյինք իրար ու փախչում. հետևից վազելիս յես պինդ բռնեցի Իլյիչի թևը: Նա ազատեց թեւն ու սկսեց ծիծաղել ինձ վրա՝ ասելով.

— Ձբոնեցի՛ր, չբռնեցի՛ր:

Յես հարցրի.


— Ինչպե՞ս թե, չե՞ վոր բռնել եմ:

Նա պատասխանեց.

— Դու վոչ թե ինձ բռնեցիր, այլ իմ բաճկոնի թևը, — ու փախավ:

Այն ժամանակ Վլադիմիր Իլյիչի ձեռքը վերսվա՞րդ եր, նա իր բաճկոնի մի թևը չեր հաղնում:

Այսպիսով Վլադիմիր Իլյիչին չկարողացա բռնել:



64. ԺԱՄԻ ԶՈՐՍԻՆ

Մի հարուստ անգլիացի ավտամոբիլով գնում եր կայարան: Նա շտապում եր գնացքին:

Հանկարծ մեքենան կանգ առավ:

Շոֆերն ավտամոբիլից դուրս յեկավ, դիտարկը վերցրեց ու լուռ կանգնեց:

— Մեքենան փչացե՞լ ե, — հարցրեց հարուստը: Շտապի՛ր, ժամի չորսին դնացքը մեկնում ե. հինգ րոպե յե մնում:

Շոֆերը նայեց ժամացույցին և ասաց.

— Հիմա Մոսկվայում թաղում են լենինին՝ ամբողջ աշխարհի բանվորների առաջնորդին: Ամեն տեղ կյանքը հինգ րոպեյով կանգ ե առնում:

— Վաղվանից դուք ե՛լ իմ շոֆերը չեք, — կատաղած հայտարարեց հարուստը:

Նա կարմրալանջ մի թռչուն ուներ վանդակում: Չգիտեմ, ի՞նչն էր բռնել, փողո՞վ էր առել, թե՞ վորեւէ մեկը նվիրել էր նրան. հիշում եմ միայն, վոր թռչունը շատ չապրեց, տխրեց, թռչնեց ու սատկեց: Չգիտեմ, թե ի՞նչից այդպես յեղավ. մեղավո՞ր էր արդյոք վալողյան, վոր մոռանում էր թռչունին ժամանակին կերակրել, թե վոր: Հիշում եմ միայն, վոր մեկը նախատում էր նրան այդ բանում, և հիշում եմ Վալողյայի լուրջ, կենտրոնացած հայացքը, վորով նա նայում էր սատկած թռչունին և ասաց ասաց վճռական. «Այլևս յերբեք վանդակում թռչուն չեմ պահի»:

Յեվ իսկապես, այլևս նա վանդակում թռչուն չէր պահում:

63. ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉԻ ՀԵՏ ՍԱՆՏՈՐԻԱՅՈՒՄ

Մի անգամ հայրիկս սանատորիա դնաց Վլադիմիր Իլյիչի հետ տեսակցելու. ինձ ու յեղբորս ել հետը տալով: Յերբ տեղ հասանք, յես ու յեղբայրս սկսեցինք այդում խաղալ, իսկ հայրիկս խոսում էր Իլյիչի հետ:

Հետո մեր խաղին միացավ Վլադիմիր Իլյիչը. մենք խիում եյինք իրար ու փախչում. հետեւից վազելիս յես պինդ բռնեցի Իլյիչի թևը: Նա ազատեց թեմն ու սկսեց ծիծաղել ինձ վրա՝ ասելով.

— Չբռնեցի՛ր, չբռնեցի՛ր:

Յես հարցրի.


— Ինչպե՞ս թե, չե՞ վոր բռնել եմ:

Նա պատասխանեց.

— Դու վոչ թե ինձ բռնեցիր, այլ իմ բաճկոնի թևը, — ու փախավ:

Այն ժամանակ Վլադիմիր Իլյիչի ձեռքը վիրտավորված էր, նա իր բաճկոնի մի թևը չէր հագնում:

Այսպիսով Վլադիմիր Իլյիչին չկարողացա բռնել:



64. ԺԱՄԻ ԶՈՐՍԻՆ

Մի հարուստ անգլիացի ավտոմոբիլով գնում էր կայարան: Նա շտապում էր դնացքին:

Հանկարծ մեքենան կանգ առավ:

Շոֆերն ավտոմոբիլից դուրս յեկավ, դլխարկը վերցրեց ու լուռ կանգնեց:

— Մեքենան փչացե՞լ է, — հարցրեց հարուստը: Շտապի՛ր, ժամի չորսին դնացքը մեկնում է. հինգ, րոպե յե մնում:

Շոֆերը նայեց ժամացույցին և ասաց.

— Հիմա Մոսկվայում թաղում են Լենինին՝ ամբողջ աշխարհի բանվորների առաջնորդին: Ամեն տեղ կյանքը հինգ րոպեյով կանգ է առնում:

— Վաղվանից դուք ե՛լ իմ շոֆերը չեք, — կատաղած հայտարարեց հարուստը:



Ի. Վ. ՄՏԱԼԻՆ

65. ԸՆԿՆԵՐ ՄՏԱԼԻՆԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

Գորի քաղաքի յերկու կողմից անցնում են Գուռ և Լյախվա գետերը: Գորին չըջապատված և պտղատու ալյուխներով: Քաղաքում բարձրանում են հին բերդի ավերակները:

Հին Գորին ուներ մոտավորապես հազար բնակիչ, չատ յեկեղեցիներ, խանութներ, գինետներ և այն ժամանակվա ամբողջ գավառի համար մի քանի դպրոց:

Այդ քաղաքում, կոչկակար Վիսսարիոն Զուղաշվիլու ընտանիքում, 1879 թվականին ծնվեց Իոսիֆը:

1890 թվականին ընդունվելով Գորու ծխական դպրոցը, յես առաջին անգամ հանդիպեցի 11-ամյա Իոսիֆ Զուղաշվիլուն:

Շարաթական յերկու անգամ ունենում ելինք վրացերեն լեզվի դաս:



Յես լինելով Մինգրելացի, վրացական բառերը ճիշտ չեյի արտասանում և դա առիթ եր տալիս աչակերաներին ծիծաղելու ինձ վրա: Իսկ Իոսիֆն, ընդհակառակը, ոգնության յեկավ ինձ:

Համեստ ու զգայուն այդ տղան մոտեցավ ինձ ու ասաց.

— Յեկ յես քեզնից սովորեմ մինգրելերեն լեզուն, իսկ դու ինձնից՝ վրացերենը:

Ընկերոջս այդ զգայուն վերաբերմունքը սաստիկ հուզեց ինձ:

2

Միայն համեստությունը չեր, վոր զարդարում եր Իոսիֆին: Մեծ ընդունակություններով և ուշիմությամբ նա աչքի յեր ընկնում աչակերաների մեջ:

Սովորարար նա լուրջ եր, հանտատակամ, չարություն ու չարածճիւթյուն չեր սիրում: Պարասյունք-

Ներքից հետո չտապում եր տուն և նրան միշտ կարելի յեր տեսնել՝ զիրքը առաջին նստած:

Իմ հորեղբայրը, վորի մոտ յես ապրում եյի, վո- խաղըվեց այն տունը, վորի բակում ապրում եր նաև Իոսիֆը իր մոր հետ:

Նրանց սենյակն ուներ ընդամենը մի քանի քառա- կուսի մետր տարածություն և գտնվում եր խոհանոցի մոտ: Մուտքն ուղիղ բակից եր, սենյակը մի աստիճա- նով նույնիսկ բարձր չեր գետնից: Հատակը պատած եր աղյուսով, փոքր լուսամուտից շատ քիչ լույս նր թափանցում ներս: Սենյակի ամբողջ կահ-կարասին բաղկացած եր մեկ փոքրիկ սեղանից, նստարանից և լայն թախտից, ծածկված «ճլուպով»—ծղոտե խտրով:

Իոսիֆի մայրը խղճուկ վաստակ ուներ: Նա զբաղ- վում եր Գորու հարուստ բնակիչների տներում լվացք անելով և հաց թխելով: Սենյակին հարկավոր եր վճա- րել ամիսը մեկ ուրբլի 50 կ., բայց միշտ չեր, վոր հա- ջողվում եր հավաքել այդ մեկ ու կես ուրբլին:

Մոր ծանր, չարքաշ կյանքը, չքավորությունն անդ- բաղառնում եր Իոսիֆի վրա: Նա չեր սիրում այցելել ունեւոր կյանք վայելող մարդկանց: Չնայած յես նր- րան այցելում եյի որվա ընթացքում մի քանի անգամ, բայց նա ինձ մոտ բարձրանում եր շատ սակավ, վորով- հետև իմ հորեղբայրն այն ժամանակ հարուստ եր:

66. ԼԵՆԻՆԻ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ՄԱՄԼԱՔՅԱԹԸ

1

Յերբեք չի յեղել, վոր այդպիսի փոքրիկ աղջիկ ստանա այդքան մեծ նվեր:

Տասներկու տարեկան Մամլաքյաթ Նախանգովան կոլխոզի լավագույն աշխատանքի համար խորհրդային



կառավարութեան կողմից պարզնաւորվեց լենինի շքանշանով:

Մամլաքյաթը Տաջիկստանի սոցիալիստական դաշտերի լավագույն հարվածայիններէ հետ յեկել էր Մոսկւա:

Նրա ուրախութեանը չափ չկար, նա առաջին անգամն էր Մոսկւայում, նա պետք է տեսներ ՄԵԾ ՍՏԱՒԻՆԻ:

Առավոտեան Մամլաքյաթն արթնացաւ շատ վաղ. նայեց իր չորս կողմը, «Մի՞թե յես Մոսկւայում եմ», — մտածեց նա, արագ վեր կացաւ, հազնվեց, ասնրվեց և պատրաստովեց գնալ Կրեմլ:

Նրա դեմքը ժպտում էր:

2

Յերբ Մամլաքյաթը մտաւ Կրեմլի դեղեցիկ, սպիտակ սյունադարձ դահլիճը, նա գրավեց բոլոր պատգամաւորներէ ուշադրութեանը. — նա պատգամաւորներէ մեջ ամենափոքրիկն էր:

Հանկարծ դահլիճը լցվեց ծափերի վորոտով: Մամլաքյաթի սիրտն արագ բարախեց: Նա բեմի վրա տեսաւ ընկեր ՍՏԱՒԻՆԻ ուրախ ժպտացող դեմքը: Մի՞թե դա յերազ չէ, մի՞թե դա ճիշտ է, մտածում է Մամլաքյաթը: Կամաց-կամաց ծափերը դադարեցին: Մամլաքյաթն իր աչքերը չէր հեռացնում ընկեր ՍՏԱՒԻՆԻՅ:

Յեւ ի՞նչ. Մամլաքյաթն ինքն եւ չէր հիշում, թե ինչպէս նա մի վայրկյանում դանվեց բեմում, փաթաթվեց ընկեր Ստալինի վզովը: Ծափահարութեանները նորից ուժգին թնդացին:

3

Մամլաքյաթը պատմեց իր կատարած աշխատանքի մասին, նրա ձայնը զնգում էր դահլիճում, համարձակ և հպարտ: «Յես որական հավաքում եյի 102 կիւրամբակ, յես դպրոցում եւ հարվածային եմ»:

Մամլաքյաթը դեռ խոսքը չէր վերջացրել, ընկեր ՍՏԱՒԻՆԸ մոտեցաւ նրան, շոյեց և կապեց նրա ձեռքին մի դեղեցիկ ժամացույց:

Դահլիճում նորից բարձրացաւ ծափերի ուժգին վորոտ. Մամլաքյաթը իրեն յերբեք այդպէս բախտավոր չէր զգացել:

67. ԱՄԱՅԱ-ՌՈՒԻՍ

(Դոկորես Իբարրուրիի աղջիկը)

Նա աչքեր ունի թուխ ու խելացի
Յեւ կարոտով լի մի սիրտ բարախուն,
Վարդ է շաղերով ջինջ լուսաբացի
Յեւ ժիր է, ինչպէս դաշտերի մեզուն:

Նստած նա հիմա ջերմին սենյակում,
Իր նոր, հարազատ ընկերներէ մոտ,
Մայրիկի համար բարձիկ է նախշում՝
Կարմիր թելերին խառնելով կարոտ...

Կարմիր թելերին խառնելով կարոտ
Հերոս մայրիկին է ահա հիշում,
Վորն իր սրտաբուխ խոսքերով բոցոտ
Ահեղ, փոթորկոտ մարտեր է վարում...

Յեւ զիշերը, յերբ հոգնած մարտերում
Մայրը փակում է աչքերը պայծառ—
Տեսնում է մի պահ Ռուխսին խոհուն,
Նրա վոստոստուն մատները համառ,

Վոր դարուն կյանքի հույսերով անմար՝
Բարձիկ է նախշում մայրիկի համար...

(Զինական քանակի պատանի մարտիկը)

1

Նա 13 տարեկան է և արդեն մեկ տարուց ավելի յե, ինչ պիտներական ջոկատի ջոկատավար է: Լինել պիտներ Զինաստանում, դա նշանակում է պայքարել հայրենիքի ազատութեան համար, պաշտպանել հայրենիքը ճապոնական ֆաշիստներից:

Դոնգ-Տույի պիտներները մտան չինական մի բանակի մեջ և սկսեցին աշխատել աֆանգ վորպես սանիտարներ: Ծանր վիրավորներին նրանք հիվանդանոց ելին տանում, իսկ թեթև վիրավորների վերքերը տեղում կապում: Կռվի ժամանակ պիտներները փամփուշտ ելին հասցնում չինական հերոս մարտիկներին և շատ անգամ իրենք ել ելին կրակում:

Ճապոնական ֆաշիստները շատ պատանի չինացիներ են բռնել ուխտեր քանդելիս, պահեստներ հրդեհելիս և իրենց այլ վնասներ հասցնելիս: Դրա պատճառով ել ճապոնական բանակը հիմա լիքն են չինական հերոս պիտներներով ու պատանիներով:

2

Դոնգ-Տուն միշտ առաջին շարքերումն էր և որինակ էր ցույց տալիս մյուսներին: Նույնիսկ հասակավորները հիանում էին նրա հերոսութեամբ:

Մեկ անգամ զորամասի հրամանատարը իր մոտ կանչեց նրան.

— Դոնգ-Տու, դու պետք է անցնես մոտիկ քաղաքը, վորտեղ թշնամու զորքերն են տեղավորված. կարո՞ղ ես: Դու պետք է վնասես թշնամուն, ինչով վոր կարող ես և նրա քանակի և ուժի մասին մեզ տեղեկութուն բերես:

Դոնգ-Տուն պատիվ տվեց.

— Կա, հրամանատար:

Այնուհետև ութ որ նա չերեկաց:

Դոնգ-Տուն շատ դժվարութեամբ անցավ թշնամու թիկունքը: Նրան սո՛ւն մի քայլափոխում վտանգ էր սպառնում: Ութ որ անընդհատ նա փչացրեց գնացքներն ուխտեր, հրդեհեց զինապահեստներ և կարողացավ շատ տեղեկութուններ հավաքել թշնամու ուժի մասին:

Ութ որ անընդհատ նա թագնված մնաց մարդկանցից: Կերակրվում էր ինչով վոր պատահում էր: Անտառում գտնված ժամանակ նա յերեք որ միայն վայրի պտուղներով էր կերակրվում:

Ութերորդ որը Դոնգ-Տուն հոգնած, սոված, պատառոտված հագուստներով ներկայացավ իր զորամասը և զեկուցեց հրամանատարին.

— Ձեր կարգադրութունները կատարված են, հրամանատար:

— Կեցցե՛ս, Դոնգ-Տու, Զինաստանը չի վռնջանալ քանի քեզ պես հերոսներ ունի:



69. ԿՈՒՆԿՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

1

Աղվեսն ու կոունկն ընկերացան: Կոունկը բուն չի-
նեց, ձու ածեց, թուխս նսպեց, ձագ հանեց: Աղվեսն եւ
ձագեր ունեցավ, մայր դարձավ:

Մի որ կոունկը գնաց ձագերի համար կերակուր բե-
րելու: Տնպահ աղվեսը բռնեց կոունկի ձագերից մեկին,
վիզը վռլորեց, անուշ արեց: Տուն յեկավ կոունկը և
ի՞նչ տեսնի... աղվեսը լալիս ե, իրեն քրքրում ու ա-
սում...

— Կոունկ քուրիկ, եսպես ել անբախտությո՛ւն...

— Ի՞նչ անբախտությո՛ւն, ի՞նչ ե պատահել, աղ-
վես քուրիկ:

— Բա չես ասի, մեր բալիկը չկա՛ ու չկա: Ենքան
մա՛ն յեկա, ենքան մա՛ն յեկա, չկա՛ ու չկա՛...

— Վո՞ր բալիկը:

— Մե՛ր բալիկը:

— Մեր վո՞ր բալիկը:

— Նա՛, նա՛,

Աչքս կուրանա.

Փափկամազիկ,

Յերկար-վզիկ,

Յերկար-վոտիկ,

Յերկար-տոտիկ,

Բոյը բարձրիկ,

Ձենը քաղցրիկ...

Գովում եր աղվեսը, իրեն քրքրում, աչքը խփում՝
հազար թափում:

— Աղվես՛ս քուրիկ, — ասում ե կոունկը.

— Դու ձագի տեր ես,

Դու սիրող մեր ես,

Արցունք մի՛ թափի,

Արցունք մի՛ չափի:

Դա ել չար բախտից:

Դա ել մեր բախտից:

— Հա՛, հա՛, — հեկեկում եր աղվեսը, — հա՛, կը-
ռունկ քուրիկ, հա՛, լացը չի ոգնի, անցածն անցած ե:

2

Յերկրորդ որը կոունկն ելի գնում ե կերակուր բե-
րելու: Տնպահ աղվեսն ելի բռնում ե կոունկի մյուս ձա-
գին, վիզը վռլորում ու անուշ անում:

Յերկրորդ որն ել ուտում ե վերջին ձագին:

Կոունկն ես անգամ հասկանում ե, վոր ձագերին ու-
տողը քուրիկ աղվեսն ե, բայց իրեն չհասկացողի տեղ
ե գնում:

— Աղվես՛ս քուրիկ, — մի որ ելաւում ե կոունկը, —
են ե՛ իմ ձագերը կորան, տանողի աչքը դուրս դա, քո
ձագերն ել մեծացան, իրենց-իրենց կապրեն: Արի գը-
նանք՝ քիչ ման գանք, սրտներս բացվի:

— Ե՛, ո՞ւր գնանք, — կոունկ քուրիկ:

— Ա՛յ, հենց կուզես յերկինք թռչենք, տեսնենք
վերեն ի՞նչ կա:

— Ի՞նչ ես ասում, քուրիկ, — ծիծաղեց աղվեսը, —
ի՞նչպես կարող եմ քեզ հետ թռչել, յես թե չունեմ:

— Ե՛, ի՞նչ անենք, վոր չունես. յես հո ունե՞մ:

Նստիր ինձ վրա, միասին թռչենք:

Աղվեսն ինքն իրեն մտածում ե.

«Ես ինչ լավ յեղավ. կգնամ յերկինք, պատահած
թռչունը կխեղդեմ, վեր կածեմ գետին. հետ դալիս ել
քուրիկիս կրունեմ, կուտեմ... Սրանից ել լավ բա՞ն»:

Աղվեսը նստում ե կոունկի վրա:



Կռուները թափահարում ե թեկերը, զներ բարձրա-
նում, գնում ե գնում, հասնում ե յերկինք ու հան-
կարծ շուռ ե գալիս:

Մին ել աղվեսը մեջքի վրա դրը՝ խկ... ընկնում ե
գետին ու ջարդվում:

— Աղվես քուրիկ, — ցած գալով ասում ե կռու-
նը, — այդ ել քո՛ բախտից, այդ ել քո՛ բախտից:

Առածներ— 1. Ինչ կը ցանես, այն կը հնձես:

2. Կարասին ինչ ձեն տաս, այն ել կլես:

70. ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Առյուծը ծերացել եր. թաթերը թուլացել էյին,
ատամները՝ թափվել. ել չեր կարողանում վորս բռ-
նել: Նա մտածեց խորամանկությամբ վորս ճարել.
պառկեց քարայրում ու հիվանդ ձևացավ: Գաղտնեքը
գալիս էյին նրան տեսության: Բայց վոչ վոք հեռ չեր
գառնում: Առյուծը բռնում եր նրանց ե ուտում:

Յեկավ նաև աղվեսը, կանգնեց քարայրի մուտքի
առջև ե հարցրեց.

— Ի՞նչպես ե ատողջությունդ:

Առյուծը պատասխանեց.


— Վաս ե. ինչո՞ւ ներս չես գալիս, բարեկամս:

Աղվեսը պատասխանեց.

— Կգայի, բայց տանդ շուրջը թողած հետքերն
ուրիշ բան են ասում. չառերն են ներս մտել, խիկ վոչ
վոք դուրս չի յեկել:

ՀԱՆՆԵԼՈՒԿ

Կենդանի յե վայրենի,
քնքուշ ու թանդ մորթ ունի.
Ինքը աղահ, խորամանկ,
բունը ունի հաղար ծակ:



71. ԱՐԻ՛, ԱՐԻ՛, Ո՛Վ ԳԱՐՈՒՆ

Զմռան մի ցուրտ առավոտ
 Ծիտը թռավ ծառի մոտ
 Ասաց՝ ծիտիկ,
 Իմ լավ քուրիկ,
 Վոչ թռչում ես, վոչ յերգում,
 Ի՞նչ ես անվերջ յերգում:
 Ասաց—գարուն եմ ուզում:
 Վազող առուն եմ ուզում,
 Կանաչ մարդեր եմ ուզում,
 Գարնան յերգեր եմ ուզում,
 Ուզում եմ յես ծիլ ու խոտ,
 Գարնան յերկինք, մաքուր ող,
 Արտե՛ր, արտե՛ր, չող ու չաղ,
 Կարմիր վարդեր, յերգ ու տաղ:

Արի, արի, ո՛վ գարուն,
 Գալի բարի, զո՛վ գարուն,
 Ծիտիկներն իս բարեկամ,
 Ծիլ ու ծաղկի ծով գարուն:



72. ՆԱՄԱԿ ՎՈՐՈՇԻՆՈՎԻՆ

Ընկեր Վորոշիովին
 Նամակ գրեցի.
 — Ընկեր Վորոշիով,—
 Այսպես սկսեցի,—
 Յեղբայրս այս տարի
 Բանակ ե գնում,
 Գիտեմ, վաղուց ե
 Նա այդ յերգում:
 Ընկեր Վորոշիով,

Ուրախ կլինես,
Յերբ իմ մեծ յեղբորը
Բանակում տեսնես:

Վարպետ դարբին ե
Նա աշխատանքում,
Լավ մարտիկ կլինի
Կարմիր բանակում:

Ընկեր Վորոշիլով,
Վստահիր նրան,
Կմեռնի՝ չի թողնի,
Վոր մեզ վրա գան:
Լսել եմ՝ ֆաշիստը
Ուզում ե կովել,
Յեվ մեր յերկիրը
Մտնել, թալանել:

Ընկեր Վորոշիլով,
Ապագա մարտում
Նշանակի՛ր նրան
Առաջին դիրքերում:
Նա դիպուկ խիռը
Ինքդ կտեսնես,
Յերբ թշնամու դեմ
Գնալ հրամայես:

Իսկ յեթե կմեռնի
Իմ յեղբայրը մեծ,
Այդ մասին իսկույն
Նամակ կգրես:

Ընկեր Վորոշիլով,
Շուտով բոյ կառնեմ,
Յեղբորս փոխարեն
Դիրքում կկանգնեմ:



Կոլյայի մայրը դպրոց յեկավ: Յերբ նա հանում եր
վերարկուն, յերեխաները նկատեցին, վոր նա իր
կրծքին կրում ե Կարմիր դրոշի վառվռուն չճանչան:

— Ոհո՛, մորաքույր ե, բայց չճանչան ունի,—
ղարմացած բացականչեց Կիմը:

— Իսկ ինչո՞ւ համար են ձեզ չճանչան տվել: Պատ-
մեցեք, մորաքույր,— աղմկեցին այս ու այն կողմից
յերեխաները:

Կոլյայի մայրը ժպտալով ասաց.

— Լավ, կպատմեմ, յերեխաներ:

Այս դեպքը պատահեց 1919 թվականին: Ծանր ժա-
մանակ եր: Գեներալներն ու սպաներն ամեն կողմից
չըջապատել էյին մեր յերիտասարդ Խորհրդային հան-
րապետությունը: Մեր գործարանից համարյա բոլոր
բանվորները ճակատ էյին մեկնել: Նրանց հետ յես ել
ղնացի:

Մի անգամ խիստ հրացանաձգության ժամանակ
անտառից հանկարծակի դուրս թուան մի խումբ կազակ-
ներ: Մենք անակնկալի յեկանք, կարմիր բանակային-
ներից վոմանք թողին հրացաններն ու թաղնվեցին:

Յես չկարողացա համբերել. դուռացի՝ «Ընկերներ՛ր,
չհանձնվեք»: Իսկ ինքս հրացանս ձեռքիս հարձակվե-
ցի կազակների վրա: Տեսնում եմ՝ ինձ հետևում են
մերոնք «ուռա՛» բացականչելով: Ամբողջ գունդը
կովի բռնվեց: Կազակներին հալածեցինք ու հաղթե-
ցինք:

Ահա թե ինչո՛ւ համար եմ ստացել այս չճանչա-
նը,— վերջացրեց իր պատմությունը Կոլյայի մայրը:

Ա՛խ, այսպէս ել գիժ ամի՞ս,
 Մարդու հանգիստ չի տալիս.
 Այսոր ուրախ որ կանի,
 Վաղը՝ անձրե ու քամի.
 Առավոտը՝ պայծառ ող,
 Կեսորը մութ ու ամպոտ:
 Մին հագնում է սպիտակ,
 Մին կանաչին է տալիս.
 Մի որ ցուրտ է, մի որ տաք,
 Մին խնդում է, մին լալիս...
 Ա՛խ, այսպէս ել գիժ ամի՞ս:

ՀԱՆՆԸՆԻ

Բերան չունի՝
 Փչում է,
 Ու յերբեմն ել
 Հաջում է.
 Վոչ տուն ունի
 Վոչ ել տեղ,
 Նա լինում է
 Ամեն տեղ:

(Կարմիր բանակայինի պատմածից)

1

Թունդ կռիվ էր, իսկ փամփուշտն արդեն պահա-
 շել էր:

Թշնամու կրակի տակ ո՞վ կարող է փամփուշտ
 հասցնել մեզ:

Այս ի՞նչ է. ինչ-մոր կենդանի գնդակներ են գլոր-
 վում գաշախ միջով:

— Շներ են, այդ մեր շներն են. փրկված ենք:

Նրանք մոտենում են խրամատներին. թեթև ցատ-
 կում են ումբերից առաջացած փոսերի վրայով:

Գնդակը պոկել է մեկի ախանջը. մյուսի վրաքն է
 կոտրվել ումբի հարվածից. յերբորդն անվնաս է,
 բայց հազիվ է շնչում — հոգնել է:

Մենք բաց ենք անում նրանց մեջքին ամբողջաբար
 պայուսակները և հանում փամփուշտները:

Կապում ենք վիրավոր շների վերքերը, և նրանք
 նորից հետ են վազում:

Փամփուշտներ ունենք. մենք սիրտ ենք առնում և
 թշնամուն հետ ենք մղում:

2

Տաք կռիվից հետո մենք հաղթեցինք սպիտակներին.
 Եւս վիրավոր եյի, հետ եյի ընկել: Արյունաքամ եյի
 յեղել, թուլացել:

Մերոնք հռացել են, չեմ տեսնում նրանց, չեմ լը-
 սում ճայները:

Ձրամանս դատարկել եմ, բայց ելի ալրմում եմ՝
ծարալը... լերքս ցավում ե...

— Կմեռնեմ, — անցնում ե մաքուր:

Քերկու ուր եր անցել, հույսս կտրել եյի. հանկարծ
չան հաջոց եմ լսում. ուրախութեանս չափ չկա, միայն
վախենում եմ՝ չլինի շունն ինձ թողնի անցնի...

Վո՛չ, նա մոտեցավ, դատով ինձ. ինքն ել ե ուրա-
խացել, լիզում ե աչքերս, քիթս, ուրախ կլանչում ե:

Նա պառկեց կողքիս, մեջքը դեմ արեց. մեջքին
պայուսակ կար, վրան կարմիր խաչ: Յես ձեռքս յերկա-



բացրի, մի կերպ յող ու վերակապ հանեցի, վերքս կա-
պեցի: Շունը չսպասեց, անհայտացավ. յես գիտեյի,
վոր նա գնաց սգնութեան կանչելու:

Այդպես ել յեղավ. կարճ ժամանակից հետո ինձ
մոտ յեկան կարմիր բանակային սանիտարները. շունն
առաջնորդում եր նրանց:

Ինձ դրին պատդարակի վրա ու տարան:

Սանիտար շունը վրկեց ինձ մահից:

Անձրևից հետո ծաղեց արևն ու ծիածան կապեց:

— Նայի՛ր ինձ, քեզնից դեղեցիկ եմ. — ասավ
ծիածանն արևին, — տե՛ս, քանի՞ դույն ունեմ. կա-
նաչ, կարմիր, կապույտ, դեղին...

— Բայց գիտե՞ս, վոր յե՛ս եմ քեզ այդքան դույն
տվողը, — ասաց արևը:

— Դո՛ւ... սուտ ե, — ժպտաց ծիածանը:

— Սո՛ւտ ե, — ասաց արևն ու մտավ ամպի տակ:

Արևն ամպի տակ մտավ թե չե, ծիածանն ել անհե-
տացավ:

77. ՀԵ՛Յ ԶԱՆ, ԱՆՅԱՆ

Հե՛յ ջան, անցան
Բուք ու բորան,
Զմեռ պապին
Զյունի հետ,

Հովն ե խաղում
Սար ու դաշտում,
Ողբ պայծառ,
Բուրավետ:

Հե՛յ ջան, շուտով
Յերգ ու տաղով
Կգա դարուն
Ցանկալի,

Պայծառ արև,
Կանաչ տերև,
Խաղ ու ծաղիկ
Կրերի:

Մարտ ամիսն եր, բայց դեռ ցուրտ ձմեռ եր:

— Ո՛Ք, ինչքա՛ն յերկարեց այս տարվա ձմեռը, — ասում էին մարդիկ:

Ո՛Ք, յե՞րբ պետք է վերջանա այս անիրավ ձմեռը, — գանդատվում էին դադաններն իրենց վորջերում:

— Ո՛Ք, յե՞րբ պետք է աղատվենք այս անտանելի ձմեռվա ձեռքից, — արտնջում էին թռչունները մերկ ձյուղերին:

Ու սաստիկ բարկացավ ձմեռը: Վճռեց մեկ անգամից վռնչացնել բոլորին:

Ձայն տվեց բուռ ու բորանին, կանչեց սառնամանիքները, հավաքեց իր բոլոր դորությունն ու հարձակվեց աշխարհի վրա: Խոր ձյունով բռնեց ճամփաները, կապեց ջրերը, սառցե վարագույրներ քաշեց լուսամուտներին, վորջերի բերանը լցրեց և դանակի պես կտրող սուր քամին բաց թողեց դաշտերի, սարերի ու ձորերի վրա:

Բայց իզո՛ւր: Թեև թռչուններից մի քանիսը ցրտահար յեղան, բայց մնացածները կուշ յեկան տների ծածկերի տակ, ծխնելույզների մոտ, տաք ճեղքերում և չմեռան: Վայրի կենդանիները՝ մուշտակները հագին՝ չէին վախենում ձմեռվա բարկությունից և դուրս էին դալիս վորս անելու:

Մարդիկ ավելի սնդացրին պատուհաններն ու դռները, ավելացրին վառարանի կրակը, հազան իրենց ամենատաք շորերն ու դնացին իրենց դործին: Ձմեռը տեսավ այս բոլորը, տեսավ ու հուսահատվեց: Ցուրտն որեցոր թուլացավ, արևը քանի զնաց, ավելի տաքացավ, ջրերը խոխոջեցին, թռչունները յերգեցին, դաշտերը կանաչ հագան ու մարդիկ բաց արին դուռ ու պատուհան:

Գարուն եր:



Ա. Ս. Պուշկին

79. Ա. Ռ. Ա. Վ. Ռ. Տ

Բացվեց այգը արևելքում
Վառ ու զառ,
Գետի վրա լույսը հանգավ
Մեղմարար:

Ծաղկանց վրա ցողն ել իջավ
Դաշտերում,
Շարժվեց հոտը սեղ ու կանաչ
Հանդերում:

Ճամփա ընկան մեզ ու մշուշ
Դեպ ամպեր,
Սաղերըն ել յերամբ-յերամ՝
Դեպ մարդեր:

Ձարթնեց դյուղը, դաշտ են մարդիկ
Շտապում,
Յեւթի արև, իջավ յերկրին
Խնդություն:

Յորենի հատիկը պառկած էր հողի տակ. հատիկի մեջ քնած էր փոքրիկ սաղմը:

Քնած էր նա ամբողջ ձմեռը:

Գարնան արևի շողը յեկավ, կանչեց նրան.

— Զարթի՛ր, գարուն է:

Սաղմը զարթնեց հատիկի մեջ: Զարթնեց, սաստիկ քաղց դգաց, սկսեց ծծել իր մոտի պաշարը: Ծծեց, ծրծեց ու մեծացավ, պատռեց պարուրներն ու արմատիկները խրեց ցած, փափուկ հողի մեջ, նոր կերակուր վորոնելու:

Իսկ արևի ջերմությունը չարունակ քաշում էր նրան վերևից, ու սաղմը ձգվում էր դեպի այն կողմը, դեպի վեր:

Ձգվեց, ձգվեց ու հանկարծ նրա դալար ծիլը դուրս նայեց հողի տակից:

Ի՛նչ տաք էր, ի՛նչ պայծառ ու ի՛նչ ազատ էր նրա շուրջը:

Առավոտյան հովիկը ցողի մի կաթիլ դրեց նրա կիսաբաց թերթիկին ու փսփսաց.

— Բարի՛ լույս:

ՀԱՆՆԵԼՈՒԿ.— Սև հինեմ, կանաչ դործեմ,
դեղին կտրեմ:



Հովհաննես Թումանյան

81. ԿԱՆԱԶ ԱԽՊԵՐ

Ե՛յ, կանաչ ախպեր,
Ե՛յ, ճանաչ ախպեր,
Արի՛, քեզ հետ բեր
Արևի շողեր,
Բեր անուշահոտ
Ծիլ, ծաղիկ ու խոտ,
Կարկաչուն փտակ,
Յերկինք կապուտակ,
Խառնուրդի համբեր,
Զրնգան յերգեր,
Գառների մայուն,
Սաղ, ուրախություն...
Ե՛յ, կանաչ ախպեր,
Ե՛յ, ճանաչ ախպեր:

82. Գ Ա Ր Ո Ի Ն

Ձուգլեւ եւ կրկին
Անտառ ու ալբի,
Վշչում ե ուժգին
Ձուրը գետակի:

Հավքերը սիրուն
Համերդ եւ կաղմեւ,
Արտում ու դաշտում
Յերդ ու հորովել:

Թիթեռներն ուրախ
Թռչում են դեռ-դեռ...
Ձա՛ն, տեսքիդ մատաղ,
Գարուն ե արդեն:

83. ԱԶԱՐԻԱՅՈՒՄ


Յես հայրիկիս հետ երսկուրսիա եյի գնացել Բա-
թումի: Ահա մենք Սև ծովի գեղեցիկ ափերին ենք,
ցխորուսային բույսերի տնկարանների մեջ:

Մանգարինի, նարնջի, կիտրոնի ծառերի ճղները
կախվել են հասած դեղնադույն պտուղներով: Մեծ-վո-
քը, աղա-աղջիկ, անուշահամ գեղեցիկ մրգերը քա-
ղում, լցնում են կողովների մեջ: Մեծերը մանդարի-

նով լիքը կողովները տանում, թափում են ալտաների
մեջ, վոր կանգնած են ալբու դռանը:

50 հազար մանդարին, 70 հազար, 80 հազար,—
տետրի մեջ նշանակում ե հանձնողը:

— Մնեղարար ու անուշահամ պտուղներն իր սեղա-
նի վրա ունենալու յե մեր խորհրդային ամեն մի բան-
վոր, ամեն մի կուլտնտեսական, ամեն մի քաղաքացի.
Թող բոլորն ոգտվեն մեր Կոլխիդայի գանձերից,— ա-
սում են կուլտնտեսականները:



Ամեն կողմ դիտելուց հետո մենք վերադարձանք
ծովափ: Լողացանք, հանգստացանք ծովափին:

Մեր ղեկավարը խոստացավ մյուս անգամ մեզ
տանել թեյի տնկարանները:

82. Գ Ա Ր Ո Ւ Ն

Զուգվել են կրկին
Անտառ ու այգի,
Վշտում ե ուժգին
Զուրը գետակի:

Հավքերը սիրուն
Համերդ են կաղմեւ,
Արտում ու դաշտում՝
Յերդ ու հորովել:

Թիթեռներն ուրախ
Թռչում են դեռ-դեռ...
Զա՛ն, տեսքիդ մատաղ,
Գարուն ե արդեն:

83. ԱԶԱՐԻԱՅՈՒՄ


Յեւ հայրիկիս հետ երսկուրսիս էյի դնացել Բա-
թումի: Ահա մենք Սև ծովի գեղեցիկ ափերին ենք,
քիտրուսային բույսերի տնկարանների մեջ:

Մանգարինի, նարնջի, կիտրոնի ծառերի ճղները
կախվել են հասած դեղնադույն պտուղներով: Մեծ-վո-
քըր, աղա-աղջիկ, անուշահամ գեղեցիկ մրգերը քա-
ղում, լցնում են կողովների մեջ: Մեծերը մանգարի-

նով լիքը կողովները տանում, թափում են ավառների
մեջ, վոր կանգնած են այգու դռանը:

50 հազար մանգարին, 70 հազար, 80 հազար,—
տետրի մեջ նշանակում ե հանձնողը:

— Մնեղարար ու անուշահամ պտուղներն իր սեղա-
նի վրա ունենալու յե մեր խորհրդային ամեն մի բան-
վոր, ամեն մի կոլտնտեսական, ամեն մի քաղաքացի.
Թող բոլորն ոգտվեն մեր Կոլխիզայի գանձերից,— ա-
սում են կոլտնտեսականները:



Ամեն կողմ դիտելուց հետո մենք վերադարձանք
ծովափ: Լողացանք, հանգստացանք ծովափին:

Մեր ղեկավարը խոստացավ մյուս անգամ մեզ
տանել թեյի տնկարանները:



Աբ․ Խմկոյան (Խմկո-Ապեր)

84. Գ Ա Ր Ղ Ի Ն

Զմեռն անցաւ...
Յեկաւ դարուն...
Զյունը հալիւն,
Լցիւն ատուն:

Արե ծագեց
Արեւելքից,
Ծիւեր քաշեց
Գետնի տակից:

Տաք հարաւից
Յեկան հալքեր,
Բուն հյուսեցին
Ընկեր-ընկեր:

Ծառը պակեց,
Տվեց բողբոջ,
Առուն հանեց
Անուշ խոխով:


Փովեց կանաչ
Սարի լանջին,
Կարմրեց մորին
Թփի միջին:

Դաշտը թավիշ
Զդեստ հագաւ,
Կանգնեց քարին
Յերգեց կաքաւ:


Արուս գնաց
Ծնած մաքին,
Կաթը տվեց
Անուշ ձագին:

Կարասին իջաւ
Ընկաւ դետը,
Ոճը գնաց
Ճուտն իր հետը:

Մուկ ու մողես,
Միջատ, գետուն
Արեն յելան,
Յելան դարուն:



Գ Ա Ր Ո Ւ Ն



85. Խ Խ Ո Ւ Ն Ջ

Ես ի՞նչ տուն,
 Ես ի՞նչ բուն:
 Ո՞վ է ապրում
 Ես բնում:
 Դուռը, դը՛նդ,
 Մին եւ աը՛նդ
 Դուրս յեկալ, դուրս
 Գլխաբաց,
 Տունը մեջքին՝
 մի խըխունջ.
 Տունը տաք-տաք,
 տան ներսում
 Խըխունջը մերկ
 չի մրսում:
 Տեսեք, վտաներ
 Կից փորին,
 Մի-մի աչք եւ
 պողերին,
 Զույգ չոշափուկ
 ցից գլխին,
 Վոր միշտ գանի
 իր ուղին,

Վոր որն որին
 արեշող,
 Շողալի-շողալի
 ու փորսող,
 աչքը չռած,
 սիրտը դող,
 թաց տերեւից
 խմի ցող,
 Սունկի հյութով
 կուշտ ճաշի.
 հետո իրեն
 ներս քաշի,
 իր տան մեջը
 թաղնովի,
 Դրսից կանաչ
 հաղնովի:
 Ինչո՞ւ ալդպես,
 հասկացի,—
 Վոր թշնամին
 չկացի:

86. ԿԿՈՒՆ ՈՒ ԱՔԼՈՐԸ

— Չնաչխարհիկ
 իմ աքլարիկ,
 Չայնդ գիւղիւ,
 Վոսկի ծիւծիւ,
 Յերգերիդ մեջ
 Բյուր յերեւջ:
 — Կկու քուրիկ,
 Հուրիկ, բուրիկ,
 Քո ճայնն ել ե
 Լավ գեղգեղում,

Ծոր ե տալիս
 Ու մըղմղում:
 Յերգ եմ լսել
 Յես շատ ու քիչ,
 Բայց չեմ տեսել
 Քեզ պես յերգիչ:
 — Վոսկեփետուր,
 Անուշ իմ քուր,
 Կուգեմ լսել
 Չայնդ անսպառ
 Միշտ անդադար:

— Պուճպուճուրիկ,
 Մի պուտ ջրիկ,
 Կկու քուրիկ,
 Յերգում եմ յես,
 Վոր լուծ ես
 Նսքան պուճուր,
 Սպասելով
 իմ աչքերը
 Կտրում են ջուր:
 Վո՞րտեղից ե
 Քեզ եղպես ճայն,
 Մաքուր, քնքուշ
 Ու զընդընդան:
 Դուք եղպես եք
 Ամբողջ ցեղով.
 Մի բուռ բան եք
 Թեե տեղով,
 Բայց ձեր յերգը

Խիստ աջողակ,
 Չունի, չունի
 Վոչ մի սոխակ:
 — Դո՛հ եմ քեզնից,
 Կտրիճ աքլար.
 Խղճով ասենք՝



Դու միայն
 Լավ ես յերգում
 Դրախտահավից,
 Թուշունների
 Լավի լավից:
 Վողջ աշխարհը
 Խոսքիս վկա,
 Քեզ պես յերգիչ
 Չըկա, չըկա:

Եստեղ ծիար
 Ծիարիկ-միարիկ
 Ասավ. «Հլա
 Սրանց մտիկ,
 Ի՞նչ լավ գիտեն
 Իրար յեղել.
 Ասա թողի՞ն
 Պակաս տեղ ել:
 Ե, լավ, հերիք
 Իրար դովեք.
 Աշխարհ գիտի,
 Թե դուք ով եք»:

87. ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԱԿ

Մայիսի մեկն էր. Արեգնազան տառի թոռնիկ
 Սոյոսյան պատրաստվում էր գնալու մայրամեկյան
 ցույցին:

Արեգնազան տատիկի աչքերը լցվեցին, նա լաց
 էր լինում:

— Տատի', ա՛յ տատի, լա՞ց ես լինում: Ելի հայ-
 րիկին ու մայրիկի՞ն հիշեցիր,— հարցրեց Սոյոսյան:

— Այո՛, — պատասխանեց տատիկը:

Սոյոսյան խնդրեց, վոր տատիկը պատմի նրանց
 մասին:

— Ի՞նչ պատմեմ, ա՛յ բալիկ, վոր հիշում եմ մի-
 տրս մզկտում ե: Հայրիկդ ուրախ մարդ էր: Յերգում
 էր միշտ, յերգում էր ժողովրդի մասին, ազատ կյան-
 քի մասին: Ահա մի որ ել ասում ե. «Մայիսի մեկը
 բանվորական տուն ե. պետք է փողոց դուրս գանք»...

Նրանք ընկերներով հավաքվեցին ու գնացին քա-
 դաքից դուրս: Մայրիկդ ել հետներն էր. նա ել բան-
 վորուհի յեր:

Ընկերները վորոշեցին, վոր հայրիկդ ճառ ասի
 ցույցի ժամանակ: Իսկ ճառ ասելու համար բանտ ե-
 յին նստեցնում: Այդ բանն իմ սրտովը չեր. տխուր
 եյի ու ասում եյի հայրիկիդ. «Ձգուչ կաց, ա՛յ վոր-
 դի, կրոնվես՝ կչարչարեն»: Եհ, ինձ լսողն ո՞վ եր...

Նա գնաց: Մի արև որ եր... Այն ժամանակ մա-
 յիսի մեկն այսպես ազատ չեյին տնոում: Դու ել հա-
 կառակի պես զարթնեցիր և սկսեցիր լաց լինել: Յեր-
 կու տարեկան հաղիվ լինեյիր:


Շատ սպասեցի, յերեկոյան ուչ մայրիկդ յեկավ.
 դու՛նտ, աչքերը արցունքով լի...

Պատմեց, վոր վոստիկանները վրա յեն տվել
 բանվորական ցույցին, բանվորները դիմադրել են, զորք
 ե յեկել, սկսել են կրակել բանվորների վրա... Պատ-
 մեց, վոր հայրդ խոսում էր, սիրտ տալիս իր ընկերնե-
 րին... Մի գնդակ ել կպել և նրան ու ցած գլորել:

Դրանից հետո մորդ որն ել սևացավ, — հիվանդ
 էր, վշտառ. ապրուստի միջոց չունեյինք... և մի որ
 ել աչքերը փակեց... Յես ու դու մնացինք մենակ:

Սոյոսյայի վրա շատ էր ազդել տատիկի պատ-
 մությունը: Նա տխուր էր. բայց յերբ պատահանից
 դուրս նայեց, տեսավ, վոր շարքով անցնում են բան-
 վորներն ու կարմիր փողկապով պիոներները, զվար-
 թացավ ու ատաց:

— Դե՛, տատի ջան, յես ել եմ գնում բոլորի հետ
 մայիսի մեկը տոնելու:



88. ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ ՅԵՐԳ

Մեզ սուրիչն ե կանչում, լսի՛ր,
Այսօր ուրախ շքերթ ունենք.
Շո՛ւտ հավաքվեք, ա՛յ ընկերներ,
Կազմենք հազար, հազար շարքեր:
Փողկապ կապած վառ ու կարմիր,
Յերգենք ուրախ, աշխուժ ու ժիր.
Շրջենք մեր լայն փողոցներով,
Մայիսմեկյան տոնն ե այսօր.
Յե՛մ համարձակ կանչով առենք.
— Մենք յերջանիկ մանուկնե՛ր ենք:

— — —



89. ՄԱՅԻՍԻ ՄԵԿՆ ԱՔԱՌՐՈՒՄ

Ֆարական կառավարութիւնը դաժան կերպով եր-
վարվում այն հեղափոխականների հետ, վորոնք ժո-
ղովրդի աչքերն եյին բաց անում և պայքարի եյին
կանչում ինքնակալության դեմ: Վոստիկանական շը-
ները կրնակալութիւն հետեւում եյին հեղափոխականներին,
ձերբակալում եյին, հեռավոր Սիբիր աքսորում:

Վլադիմիր Իլյիչն և Նադեժդա Կոնստանտինով-
նա Կրուպսկայային նույնպէս Սիբիր աքսորեցին: Ըն-
կեր Կրուպսկայան իր հիշողութիւններում պատմում
ե, թե ինչպէս Վլադիմիր Իլյիչը տոնեց Մայիսի մեկը
1899 թ. աքսորում: Առավոտը վաղ հավաքվեցին բո-
լոր հեղափոխական բանտարկյալները, շնորհավորե-
ցին իրար և սկսեցին յերգել:

«Հասալ Մայիսը ուրախ,
Հեռու մեզնից, տխրություն,
Թող հնչի մեր յերգը խիզախ,
Գործադուլի յենք կանչում:
Վաստիկանները չարաչար
Իրենց սև դործն են անում,
Մեկ-մեկ ուզում են վորսալ
Ու նստեցնել մեզ՝ բանտում:
Մենք կթքենք նրանց վրա
Ու կտոնենք Մայիսն անա՛հ:

Մեկ ել, ահա,
Հո՛ւպ-հա՛ հո՛ւպ-հա՛»:

«Յերգեցինք ուսերեն,— գրում է Նադեժդա
Կոնստանտինովնան,— յերգեցինք նույն յերգը լեհե-
րեն և վորոշեցինք դաշտ գնալ ճաշից հետո—մայիս-
յան տոնը տոնելու:


Իսկ յերեկոյան յես և Իլլիչը չէյինք կարողանում
քնել, յերազում եյինք հաղթական բանվորական ցույ-
ցեր, վորոնց մենք ել կմասնակցենք յերբեւիցե»:

90. Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր

Ծաղիկները մեկ-մեկ բուսան
Հարյուր-հազար գույնով ներկած,
Լեռ ու հովիտ ծաղիկ դարձան,
Ծաղկանց ծովը մեղմիկ ծփաց:

Մանուշակը կապույտ գլխով
Թագ է կացել թփերի տակ,
Զանգակիկը մեղմ ճոճալով
Թերն է ներկել կապույտ-սպիտակ:

Սպիտակ հագած հեղ Շուշանը
Փսիսում է զեփյուռի հետ,
Թերը փռած Մարգարիտը
Որորվում է առաջ ու յետ:
Կարմիր մախմուր, կուրծքը սևիկ,
Մեն-մենակ է ալ կակաչը,



Մանուշակ

Զանգակիկ

Սպիտակ փրփուր, լայնաթևիկ
Բոժոժն ել կա ծաղկանց մեջը:
Սիրուն Վարդի գովքը մնաց,
Քնքուշ վարդի, կարմիր Վարդի,
Փչերով է շրջապատված,
Փուշն է սուր-սուր կարմիր Վարդի:

Մի Անթառամ ծաղիկ ել կա,
Ծաղիկներ ծաղիկն ե նա,
Նորի նման հինն անթառամ,
Ամառ, ձմեռ չի չորանա:



Մարգարիտ



Անթառամ ծաղիկ



91. ԹՈՒՉՈՒՆԻ ՄՏԱԾՄՈՒՆԻԲԸ

Յեռ ապրում եյի մի փոքրիկ տան մեջ
Առաա ու անփուլթ,
Աչխարհն ինձ համար կլոր եր անլերջ,
Կեղեվը կապույտ:

Նրանից հետո աչքս բաց արի
Մի փոքրիկ բնում,
Տեսա՝ աչխարհը հարդից ե շինած,
Ու մայրս ե շինում:

Մի որ ել, բնից գլուխս հանած,
Նայում եմ դես-դեն,
Տեսնեմ աշխարհը տերեւից շինած,
Մեր բունը վրեն:

Հիմի թռչում եմ հեռո՛ւ-չատ հեռու,
Ամեն տեղ գնում.
Բայց թե աշխարհը ինչի՞ց է շինած,
Ել չեմ հասկանում:

92. ԶՈՐՍ ՅԵՂԱՆԱԿ

1

Որը տաք է... ձյունը հալվեց արեւից,
Քչքչալով ջուր է հոսում դռներից.
Սար ու ձորերը զարդարվեցին կանաչով,
Դաշտը ծածկվեց վոջխարնների հոտերով:
Հա', հա', հա', զարուն է.
Տեսեք, ինչպես սիրուն է...

2

Սաստիկ շոգ է. ցորեն, գարի հասել են,
Հնձողները խոտը քաղել, դիզել են.
Ծառերը վողջ ծածկվել են տերևով,
Պտուղները «ճիկ» են անում ժպտալով:
Հո', հո', հո', ամառ է.
Արևը խիստ կվառն...

3

Շոգերն անցան. պտուղները քաղեցին,
Հացով, մրգով ամբարները լցրեցին,

Յերկինքն ամպեց, բարակ անձրև է մաղում,
Մերկ դաշտերը և ծառերը վաղողում:
Ե՛յ, Ե՛յ, Ե՛յ, աշուն է.
Տեսե՛ք, ինչպես նախշուն է...

4

Որը կարճ է, արև չկա, շատ ցուրտ է,
Ճերմակ ձյունը քուլա-քուլա կբրդե.
Մարդ, անասուն, բուք բորանից վախեցած,
Տաք-տաք տներ, խոր-խոր բներ են մտած:
Ո՛յ, ո՛յ, ո՛յ, ձմեռ է.
Անտանելի մի բեռ է...



Յ Ա Ն Կ

(Աստղանիշներով ցույց տրված նյութերը չափանոց չեն)

	62
* Դպրոցի ճամփան «Լուսաբեր»-ից	7
Արևի ճառագայթները Ղ. Աղայան	8
Ամառը (փոխադր. Մ. Դուրգարյան)	9
* Անուշ որբեր ժողովրդական	11
Աշխարհում մի մեծ յերկիր կա (ըստ Խյիմի)	11
* Բսանվեցի յերգը Հ. Հակոբյան	12
Կեռասը «Դասընկեր»-ից	13
* Ծխիկը Ի. Ճավնալված	15
Վողնին և ոճը Ապրեսյան	16
* Իրիկուն ՀԹ. Թումանյան	17
Յես... Խնկո-Ապեր	18
* Դեռակը «Լուսաբեր»-ից	19
Յերկու այծ Ղ. Աղայան	20
Գայլն ու դառնուկը	21
* Բիլիկ ձկնիկը Խնկո-Ապեր	23
Պեռիկի դեղատոմսը «Հոկտեմբերիկ»-ից	24
* Աղվեսը Հով. Թումանյան	26
Չղջիկը Ստ. Զորյան	27
* Գյուղացին ու արջը Խնկո-Ապեր	29
Մեր շունը » »	31
Սեկրեռը և Սլուժբան (փոխադր.)	32
* Գիշեր Հ. Հայրապետյան	35
Փոքրիկ դորձակատարը (ըստ «Լուսաբեր»-ի)	36
* Հովիվ հրաժեշտը Հով. Թումանյան	38

* Յեղրայրիկներ (ըստ Ա. Բարսեղյի)	39
Դժվար աշխատանք (փոխադր. Մ. Դուրգարյան)	41
* Տերևաթափ Հ. Թումանյան	43
Հեռախոսը Ստ. Զորյան	44
* Յորևատերն ու ջաղացպանը Խնկո-Ապեր	45
Հերոս հովիվը «Ե. Հայաստան»-ից	46
* Դժվար տարի Հով. Թումանյան	48
Դնարիկը հեղափոխական վերնյակայտ	49
* Ինտերնացիոնալ Ե. Պոսյե	51
Այդ անունը ջնջել չի լինի Զեքմանստո	53
Ընկեր Ստալինը ծարից/ինում (փոխադր.)	54
Ստալինը և Հաշմը » »	56
Ընկ. Վորոշիլովը զնդացրի մոտ (փոխադր.)	57
Ֆրանզեն մարտում (փոխադր.)	59
Բազյոնին և Եպիտակները (փոխադր.)	60
Չապաև (փոխադր.)	61
* Հոկտեմբեր Հ. Հայրապետյան	63
Ընկ. Որջնիկիձեն և մանուկները («Պիոն. Պրավդ»-ից)	64
Ընկ. Կիրովը մեղ մոտ («Պիոն. Կանչ»-ից)	66
* Ծղրիկները Հով. Թումանյան	67
Չխան գալը «Մայրենի լեզու»-ից	68
* Ճգունն ու մրջյունը Խնկո-Ապեր	70
Չիչերն անտառում (փոխադր. Սիմակ)	72
Փառավի հորթը Ղ. Աղայան	75
Կենդանիների վեճը Մ. Սիրիբյակ	76
Սահակը Սիմակ	77
Բորը (ըստ Լ. Տոլստոյի)	79
* Չմեռ Խնկո-Ապեր	80
Յերկու աղվես քոթ. Ժող. Խեֆիաթ	81
Հարյուրբանակից բուլկի (ըստ Վ. Դուրովի)	82
Շունն ու կատուն Հով. Թումանյան	85
Եսկիմոս Լոկ-Տոն (փոխադր. Մ. Դուրգարյան)	88
Տաք յերկրներ «Կարմիր արև»-ից	89
Իզուր Չկալովի հեռագրերը	90

Մանուկները մեծ բարեկամ Մ. Գորկու նամակը յերերեսներին	91
* Տոնածառի յերգը (ըստ Հո. Պողոսյանի)	93
Վալուդյան սիրում էր թռչուններին (փոխադր.)	96
Ինչպես եր սովորում էր Վալուդյան Ա. Ուլյանովա	94
Վ. Իլյեչի հետ սանատորիայում (փոխադր.)	93
Ժամը չորսին (փոխադր.)	97
Ընկեր Ստալինի մանկությունը «Պիոն. Կանչ»-ից	98
Լենինի շքանշանակիր Մաժարյանը (փոխադր.)	100
Ամայա Ռուիո (ըստ Վեսպերի)	103
Դոնդ-Տու «Պիոն. Պրավդա»-ից	104
Կուռնկն ու աղվեսը Խնկո-Ապեր	106
Առյուծն ու աղվեսը Ղ. Աղայան	109
* Արի', արի', ով դարուն Մ. Կորյուն	110
* Նամակ Վորոչիլովին Լ. Կվիտկո	111
Կարմիր շքանշանակիր (փոխադր.)	113
* Մարտ Հ. Թումանյան	114
Շները պատերազմում (փոխադր. Մ. Դուրգարյան)	115
Արևն ու ծիածանը Խնկո-Ապեր	117
Հե'յ Զան, անցան Հ. Հայրապետյան	117
Ձմեռը «Մայրենի լեզու»-ից	118
* Առավոտ Ա. Պուշկին	119
Հատիկի դարձները «Լուսաբեր»-ից	120
* Կանաչ ախպեր Հով. Թումանյան	121
* Գարուն Հ. Հայրապետյան	122
Աջաբիայում Մարգարիտ	122
Գարուն Խնկո-Ապեր	124
* Խիտունը Խնկո-Ապեր	127
* Կկուն ու աքյորը Խնկո-Ապեր	128
Կարմիր դրոշակ (փոխադր. Մ. Դուրգարյան)	130
* Մայիսի կյանք յերգ Ա. Շայխ	132
Մայիսի մեկն աքսորում (փոխադր. Մ. Դուրգ.)	133
* Ծաղիկներ Խնկո-Ապեր	134
* Թռչունի մտածումները Հով. Թումանյան	137
* Չորս յեղանակ Ղ. Աղայան	138

Պատ. Խմբագիր՝ Մ. Սանթրոսյան
Տեխ. Խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբադրիչ՝ Հ. Մանուկյան
Կանաչ սրբադրիչ՝ Յե. Տ-Մինասյան

Գլավլիտի լիազոր՝ Դ 1846 Հրատ. № 4803
Պատվեր 166. Տիրաժ 70000
Թուղթ 62x94. Տպագր. 8,5 մամ.
Մեկ մամ. 36480 նշան.
Հանձնված է արտադրության 13 փետրվարի
Ստորագրված է տպագրության համար 20

Պետհրատի I տպարան, Ֆերեան,



ԳԻՆԸ 70 ԿՈՊ.
ԿԱԶՍԸ 50 ԿՈՊ.

263

11
28879

29 МАЯ 1939

АРМЯНСКИЙ ЯЗЫК

Книга для чтения

II класс

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.